


ԿԱՐՈ ՂԱՅԱԴԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԻ
ՍԿԶԲՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ

ИНСТИТУТ ИСТОРИИ И АРХЕОЛОГИИ

КАРО КАФАДАРЯН

**ПЕРВОНАЧАЛЬНЫЕ ФОРМЫ
АРМЯНСКОГО ПИСЬМА**

**ПАЛЕОГРАФИЧЕСКОЕ
ИССЛЕДОВАНИЕ**

ИЗДАТЕЛЬСТВО АрмФАН-а
ЕРЕВАН 1939

ԽԱՀԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՅԻԼԻԱԼ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՅԴԻՑՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

003.3 (Կ. 925)

Հ-54

ԿԱՐՈ ՂԱՖԱԴՈՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ 1961 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԻ
ՍԿԶԲՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀԱՅԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐԺՅԱ Ա. Ն.-ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 9

Տպագրվում ե ԽՍՀՄ Դիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի Նախադահության վորոշմամբ:
Նախ. ռեզական՝ Ա. ԿԱՐԱԳԵՑՅԱՆ

A 12795

ПЕРВОНАЧАЛЬНЫЕ ФОРМЫ АРМЯНСКОГО ПИСЬМА (РЕЗЮМЕ)

До Маштоца, изобретшего армянское письмо, армяне не имели своего алфавита. До начала 5-го столетия при ведении государственных дел в Армении пользовались греческой, персидской и ассирийской письменностью, указания на что мы встречаем в произведениях Моисея Хоренского и Лазаря Парбского.

Правда, еще до Маштоца сириец Даниэл предпринял попытку изобрести армянское письмо, но эта попытка окончилась неудачей, так как он не был достаточно знаком с фонетическими особенностями армянского языка.

В основу классификации форм армянской письменности следует положить особенности начертания букв алфавита. На основании этого все виды армянского письма можно разбить на следующие группы:

а) *кругловатый устав* (еркатахир), который до сего времени назывался „подлинно месроповским“, или „крупным уставным“ письмом;

б) *прямолинейный устав*, называемый „средним месроповским еркатахиром“;

в) *текстовое письмо* (боловгир),—начиная с 1512 года и по настоящее время, оно употребляется в полиграфии, как текстовой шрифт;

г) *нотргир*—письмо, которым пользовались писцы, оно долгое время употреблялось в быту;

д) *скоропись* (шх'агир)—с течением времени она вытеснила нотргир.

Исследователи предполагают, что в V веке армяне имели только кругловатое уставное письмо, однако это мнение лишено основания, т. к. дошедшие до нас еще с

7-го века древние образцы письма также содержат в себе прямолинейный устав и даже скоропись.

Мы полагаем, что в V веке армяне имели три основных вида письма:

а) *кругловатый устав*—служил для надписей на камнях. Этим видом написаны также те церковные книги, которые подлежали особому почитанию, главным образом евангелия. Пользовались кругловатым уставом, начиная с древнейших времен и до 18-го века.

б) *прямолинейный устав*—служил для рукописей.

в) *нотргир*—для обыкновенного письма.

Это наше предположение подтверждается также литературными данными.

Среди избранных Маштоцом образцов письма жизнеописатель его Корюн (5-ый век) упоминает о „мелчайших“ (*Կրիշգյն*), „коротких“ (*Կարճ*), „длинных“ (*Երկարյն*), „раздельных“ (*Տիտանձին*) и „соединенных“ (*Կրկնաւոր*) видах письма. Мы полагаем, что „мелчайшее“ письмо есть ничто иное, как нотргир, „короткое“—прямолинейный устав и „длинное“—кругловатый устав, а слова „раздельное“ и „соединенное“ указывают на наличие в 5-ом веке лигатурных знаков (см. табл. № 1).

Скоропись и болоргир, являющиеся не первоначальными видами письма, одновременно выделились из прямолинейного устава и затем, лишь в 10—11-ых веках, каждый из них оформился как самостоятельный вид (см. табл. № 6).

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մեսրոպ Մաշտոցից առաջ հայկական գրեր ստեղծելու ուղղությամբ փորձեր յեղել են. Այդ փորձերն արել են ասորի այն քարոզիչները, վորոնք Հայաստանում՝ քրիստոնեյություն եյին տարածում: Մակայն, նրանց փորձերն անցել են ապարդյուն: Հայկական գրերի ստեղծումն անխղելիորեն կապված է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, և մենք նրան ենք պարտական այն հոյակապ գործը, վոր նա կատարել ե մեռ գրերի ստեղծման բնագավառում:

Ա. ՆԱԽԱՄԱՇԱՇՈՅԹՈՒՆ ԳՐԵՐԸ

Մաշտոցից առաջ հայկական գործածական գրեր չեն յեղել: Նախքան հայերեն նշանագրերի հօրինումը հայերն իրենց պետական գործերը վարում եյին հունական, պարսկական և ասորական գրերով: Այդ մասին կարեոր տեղեկություններ են պարունակում Մ. Խորենացու և Դ. Փարպեցու գործերը¹: Նույնը յե-

¹ Խորենացին այդ ժաման գրում ե.

«Բանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն և զիր պարսից և յունաց՝ որովք այժմ զիւղից և գաւառաց ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց ... առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք» (Գիրք Ա, գլ. Դ.):

Քերթողահայրը վկայում ե, վոր Վուամշապուհ հայ թաղավորի ժամանակ արքանսիրում պետական գործերը «Պարսկականաւն վարեին գրով» (Գիրք Գ., գլ. ՇԲ.):

Փարպեցին ծանթը և հունական և ասորական գրեր գործածելուն, թեև ասորականը հայերն ոկտոհցին գործածել քրիստոնեյությունը մուտք գործելու ժամանակ: Փարպեցին գրում ե.

¹ Ասորի և յոյն գրով վճարեին յայնժամ զգործ թագաւորացն հայոց՝ ար-

բեռւմ են նաև նրանից, վոր հայոց Տրդատ թագավորի (քրիստոնեականությունը ընդունող) թողած միակ արձանագրությունը, ինչպես և Արտաշեսյան հայ թագավորների դրամները հունարեն են գրված¹:

Սակայն, Վ դարի հայոց դասական լեզվի կատարելագործված լինելը բանասերներին կարծել ե տվել, թե նախքան Մաշտոցի նշանագրերը հայերն ունեցել են նաև նախամաշտոցյան հայկական գործածական գրեր, վորոնք հետագայում մոռացված են յեղել²: Այս կարծիքը հիմնված է գլխավորապես Վարդան պատմիչի և Մ. Խորենացու հետևյալ վկայությունների վրա³:

Խորենացին Դանիելյան գրելի մասին ասում ե. «Առաքեաց այր մի ... վահրիճ անուն, յոյժ փափառող նորին գործոյ, առ Հաբելն այն: Զոր առեալ, և երթեալ նովաւ հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիելէ, կարգեալ ըստ ձեռյ օրինակի յունականին զվադնջուցն գտեալ նշանագիր տառից այդ մասին» (Դիրք Գ, գլ. ԾԲ):

Վարդան պատմիչն ավելի պարզուոց ե խոսում այդ մասին. «Դպրութիւն հայերէն քսան և երկու գիր առ Դանիել Ասորու

քունի զպիրքն, զվարուցն և զըրովարտակացն» (Դիրք Ա., գլ. Ժ., եջ 37, Թիֆ. Ամս., 1908 թ.):

1 Ростовцев—Апартанская греческая надпись царя Тиридата. Анийская серия № 6. СПБ, 1911 г.

2 Քարագայշանը զրում ե.

«Աննար Էր լեզուին առանց զպրութեան հասնել յայն աստիճան զարգացման, յորում կը գտնենք զնա ի հատակտորս երգոց վիպատճաց, որոց կատարեալ նմանութիւն է թարգմանչաց լեզուին» (Քննական պատմութիւն, համ. Դ., եջ 39):

Իսահակ Հարությունյանն իր «Հայոց գիրը» աշխատության 253-րդ եջում համոզված է երպով զրում ե.

«Մեսրոպյան այբուբենից գեռաս շատ առաջ հայերն արդեն ունեցել են մեփական այբուբեն, վոր գործածության մեջ և յեղելք:

3 Խորենացին թեև Վ դարի կրտսեր թարգմանիչների խմբին պատկանող հեղինակ ե, բայց նա վոչ միայն ազգել և իր հետնորդների աշխատանքների վրա, այլև նրանով են սրբազրել նախորդներին: Խորենացու առավելությունն ե, վոր նա գրեթե զյուտը չի պատմում քաղաքական մյուս իրադարձություններից բոլորովին անկախ, ինչպես այդ արել են մյուս պատմիչները նա իր «Պատմութան «Յերրորդ» զպրության» Խէ գլուխ մինչև Կի գուխը մի շաբաթ քաղաքական իրադարձությունների հետ մեկտեղ տալիս ե նաև գրեթե գյուտի պատմությունը:

գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լիզում՝ անհոգացեալ եղեւ առաջնոցն»:

Յեվ իրբե ապացույց այդ գրերի զոյության, բերում և հետեւյալը. «...և զի լեալ է հայերէն գիր հնոցն՝ վկայեցաւ ի ժամանակս կեռնի արքայի, զի գոտաւ դրամ կուապաշտ թագաւորացն հայկազնց»¹:

Նախամաշտոցյան ժամանակներում գիր ունենալու մասին խոսում են նաև Ագաթանգեղոսը. Սա գրում ե. «Եւ մինչ դեռ կայը նա կախեալ այնպէս խօսեցաւ զայս ամենայն, և գրեցին ատենակալ դպիրքն նշանագրացն . . . Խօսեցաւ մինչ դեռ կայը կախեալ գլխիվայը և գրեցին և մատուցին զայն առաջի թագաւորին»²:

Նույն պատմիչը Հորիփսիմեյանց մասին խոսելիս՝ ասում ե. «Ումանք ի մեծամեծ սպասաւորացն արքունի անդէն ընթացաւ պատմել թագաւորին զամենայն բանս նոցա, քանզի դիպեցան անդ նշանագիրք, որ գրեցին զամենայն բանս և ընթերցան առաջի թագաւորին»³:

Վումանք այս վկայությունն աղճատված են համարել: Ինչ ել լինի, մի բան պարզ ե, վոր Ագաթանգեղոսը չի հիշատակում ինչ լիզվում գրած լինելը, ուստի հավանական ե, վոր դպիրները հունարեն գրեյին, վորովհետև այդ նույն Տրդատի թողած միակ արձանագրությունը, ինչպես հիշեցինք, հունարեն ե: Այս միւնույն խնդրի վրա ուշադրություն և դարձրել նաև Հ. Տաշյանը (ՀԱ. 1893, եջ 90):

Դանիելյան գրերի մասին Խորենացու ասած «զվաղնջուց գտեալ» կամ «վաղնջուց գրեալ» բառերը պետք են համեստալ «հին» իմաստով, այսինքն՝ «մինչ-մեսրոպյան» առումով. այդ գրերը, սակայն, կարող ելին Դանիելի ձեռքով հորինվել և գործածված չլինել⁴:

1 Վ. արդան Վ.—Պատմութիւն տիեզերական, եջ 50, Վենետիկ.

2 Ա. գաթանգեղոս—Պատմութիւն, Թիֆլիս, 1909, № 99.

3 Նույն տեղը, եջ 176:

4 Խորենացու այս վկայությունն այդ իմաստով և հասկացվել մինչև XI դարը, վորովհետև Խորենացուն իրբեալ պղբյուր ոգտագործող Ասողիկը նրան սխալ չի հասկացել Վերջինս Դանիելյան գրերի մասին ասում ե.

«Յուրոց աւուրս» (Սահակայ, Կ. Դ.) դպրութիւն հայոց լիզում իթ գիր ի

Խորենացին չեր կարող դանիելյան գրերը համարել հին ժառանակներում զործածված, քանի վոր այդ գրերը նա անվանում ե «Յարմարեալ ի Դանիէլէ եպիսկոպոսէ», Յեղ, վոր գլխավորն ե, Խորենացին մի քանի տեղ հիշատակում ե, վոր հեթանոս հայերը, սեփական գրեր չունենալու պատճառով, գործ են ածել հունական և պարսկական գրեր:

Այս խնդրում ամենից կարեորը Կորյունի վկայություններն են, վորօվինտե նա գրերի գյուտին ժամանակակից հեղինակ ե և այդ հարցին ե նվիրել իր գիրքը¹: Նրա վկայություններից յերեւում ե, վոր նախամաշտոցյան շրջանում հայերի համար հորինված են յեղել գրեր, վորոնց գյուտը կապված ե յեղել Դանիել Ասորուանվան հետ: Դ. Փարզեցու վկայությամբ պարզվում ե, վոր Դանիելյան գրերը վոչ միայն մասսայականացված չեն յեղել, այլև նրանց գոյությունը միայն հատ ու կենտ մարդկանց ե հայտնի յեղել: Յեթե այդ այրութենը տարածված լիներ, այն դեպքում չեյին ասի, թե՝ «մեկը թագավորին պատմել ե, վոր մի յեպիսկոպոսի մոտ կան նշանագրեր»: Այս ձեռվ խոսում են միայն շատ անհայտ նյութերի մասին²:

Դանիէլէ փելիսոփայէ Ասորոյ կարգեցաւ (Ասողիկ, 1885, էջ 139): Բայց Վարդան պատմիչն արդեն Խորենացու վկայությունը սիալ և հասկացել (առեւ գերը ըերած նրա խոսքերը):

1 Կորյունն իւր «Պատմութիւն վարուց և մահուան սրբայն Մեսրոպաց վարդապետի մերոյ թարգմանչի» (տպած Վենետիկում, 1833 թ. ու Թիֆլիսում 1913 թ. և այլն) աշխատությունը գրել ե 442—451 թվականներին, այսինքն՝ Մաշտոցի մահվանից հետո և Վարդանանց պատերազմից առաջ, թեև Գարսագաշյանը («Քննական պատմութիւն հայոց», հատոր Դ, էջ 26) և Գալուստ Տեր-Մկրտչյանը («Աղաթանգեղոսի աղբյուրներից», էջ 25) կարծում են, վոր Կորյունը գրել ե Վարդանանց պատերազմից հետո՝ 465 թվականից վոչ շուտ, վորովհետեւ Կորյունի աշխատանքի մեջ հիշված են «Ղեղնդյանց քահանաներից» չարչարանքները և Վահան Ամառունու մահը (465 թ.): Կորյունն ունի մեծ ու փոքր խմբագրություններ, վորոնցից սկզբնականը ե ճշմարիտ մեծն և (Տես Թորոսյան Հովհ.—«Համառոտ տեսութիւն Կորեան և իւր գրութեան վերայ», «Բազմավեպ», 1897, էջ 110, 115, 303—310):

2 Նախամաշտոցյան հայկական գործածական գրերի գեմ 1892 թ. արտահայտվեց Դ. Աղայանը «Մուրճ» ամսագրում, վորտեղ նա ապացուցեց, վոր Դանիէլյան գրերի հեղինակն ինքը՝ Դանիել Ասորին ե: Աղայանն այն կարծիքն եր, վոր Դանիէլյան գրեռով գրականություն չի յեղել այլապես այդ պահանությանն անհետ չեր կարող կորչել, այն ել զեւ Վ դարի սկզբնեւ

Նշանակում ե, նախամաշտոցյան շրջանում հայերը փորձել
են սեփական գրեր ստեղծել բայց քանի վոր փորձն արվել ե
ոտար և հայոց լեզվի առանձնահատկություններին անձանոթ
մարդու միջոցով, ուստի այդ փորձն անցել է անհաջող: II—III դ.դ.
Ասորիքից Հայաստան եյին ուղարկված ասորի քարողիչներ, վո-
րոնք շահագրգոված եյին հայերեն գրեր հորինելու գործով: Իսկ
յերկրորդ փորձողը՝ Մաշտոցը, վոր քաջ գիտեր հայոց լեզվի ա-
ռանձնահատկությունները և իր գործուղությունների ընթացքում շատ
լավ յուրացըել եր նաև հնչյունական կանոնները, կարողացավ
կատարյալ այբուբեն հորինել հայոց լեզվի համար:

Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Մինչև այժմ վերջնականապես սահմանված չեն այն հաս-
կանիշները, վորոնցով հայկական գրերը բաժանվում են տեսակ-
ների:

Ուսումնասիրողներից վոմանք՝ խօսոր, միջին և մանր յեր-
կաթագիր ասելով նկատի յեն ունենում գրերի մեծությունը. խո-
շոր անվանում են մեծ տառերով գրված յերկաթագիրը, միջին՝
միջակ և փոքր՝ մանրը, առանց նկատի ունենալու գրերի դաշ-
գրական վոճի առանձնահատկությունները:

Տեսակագորման այս մեթոդը բոլորովին գիտական չէ, վո-
րովինեակ գրի առանձնահատկությունը վորոշվում է վոչ թե նրա
մեծությամբ կամ փոքրությամբ, այլ գծագրական հատկանիւներով:

Այս տեսակետից, մեզ թվում ե, վոր գիտական ճիշտ հողի
վրա յեն կանգնած այն ուսումնասիրողները, վորոնք գրերի տե-
սակագորման չափանիշ են ընդունում նրանց վոճական առանձ-
նահատկությունները:

Եթին Ասորի գանականի ձեռքով հայկական գրեր հորինելու յերեսությը նա շատ
բնական եք համարում, մանավանդ, վոր ըրբատանեյության սկզբնական շրջանում
հայերը գտնվում եյին ասորիների ազդեցության ներքո: Աղայանին առարկում
եյին նրանով, վոր յեթե Դասիելը հնայոց համար հատուկ գրեր հորինեց, ապա
ինչու նրանք պակասավոր եյին: Այդ թերին, ըստ իս' արդյունք եր առըստա-
կան գրերի, վորովինեակ ասորականը մեծ մասամբ ձայնավորներ և բաղաձայն-
ների շնչեղության յերեք աստիճաններ չի ունենում: Ասորական գրերի վրայից
ստարի ձեռքով սարքած այբուբենը հազվի այդքան լինել:

Ուսումնասիրողներից վոմանք ել—սրանց թվում նաև չ. Գ.
Վ. Զարբանալյանը¹—յերկաթագրի տեսակներն իրարից տարբե-
րելու համար ընդունել են վոչ թե նրանց մեծությունը, այլ
նրանց գծագրական առանձնահատկությունները։ Նրանք բոլո-
րանելի յերկարագիրն անվանել են խոշոր կամ բուն մեսրոպյան,
վորի առանձնահատկություններն են համարել տառասյուները
միացնող գծերի կամարածեռությունը²։ Ուղղագիծ յերկաթագիրը
կոչել են միջին կամ միջին մեսրոպյան, վորի տառասյուները
միացնող գծերն ուղղիղ են³։

Այս տեսակետը մանր յերկարագրի նկատմամբ կիրառված
չեւ։ Ուսումնասիրողների այդ խումբն այստեղ տուրք եւ տալիս
առաջին սկզբունքին, այսինքն՝ դիրն ըստ մեծության տեսակա-
վորելուն։

Մանր յերկաթագիրը գծագրական բնորոշ առանձնահատ-
կություն չունի, այդ պատճառով ել ուսումնասիրողները տար-
բեր կերպ են բնորոշում այն։

Հ. Տաշյանը դրում ե. «Ճիշտ խօսելով՝ զիխագիր երկարագիր
է (այսինքն՝ բոլորաձն. Կ. Դ.), յէսկանս այս տեսակն (մանր
յերկաթագիրը. Կ. Դ.), բայց շատ մանր»⁴, Ուրիշները, Տաշյանին
հակառակ, պնդում են, վոր փոքր մեսրոպյան յերկաթագիրը «մի-
ջին մեսրոպյան գրերու ավելի փոքրացածն ե»։

Կարծում ենք, վոր մանր կամ փոքր յերկաթագիրն իրակ-
գրչության առանձին տեսակ հիմնավորված չե, քանի վոր գծա-
գրական առանձնահատկություն չունի, ապա ուրեմն հարկա-
վոր ե գրի տեսակների շարքից այդ անունն իսպառ վերացնել
և յերկաթագրերի բոլոր տեսակները վեր ածել յերկու հնագրա-
կան խմբակցությունների՝ բոլորաձն և ուղղագիծ։

Ուսաջարկվել են նաև մի նոր տեսակ, վորն ընկնում և բոլո-
րաձն և ուղղագիծ յերկաթագրերի միջև և վորն անվանել են
«անցման միջին»։

¹ Պատմություն հայ գոլբության, Վենետիկ, 1886, եջ 565, Այս մեթոդի հիմնագիրը Զարբանալյանն է, թեև սխալմամբ այն վերագրվել է Տաշյանին։

² Տես մեր լուսանկար № 1:

³ Տես մեր լուսանկար № 3:

⁴ Հ. Տաշյան — Սկնարկ մը հայ հնագրության մասին, «ՀԱ», 1897 թ., եջ 110 ա.։

⁵ Տես մեր լուսանկար № 4:

Հստ այդ տեսակետի, բոլորաձև յերկաթագրից և առաջ յեկել ուղղագիծ յերկաթագիրը և այդ միջանցիկ շրջանում գոյություն են ունեցել ուրույն տեսակի գրեր, վորոնց, ըստ այդ տեսակետի, տառասյուների միացման անկյունները կամարաձև են, բայց կամարը յերկու կողմից բարձրանալուց հետո սկսվում է ուղղի գիծը: Իրեն որինակ բերում են Ուխտատուրի 783 թվականի արձանագրության մեջ պատահող Ա, և, Ս տառերը¹ և Տիգրի 964 թվականի խաչարձանի Թ և Ն գրերը²:

Առաջին արձանագրության մեջ բոլոր Ա, գրերը կամարաձև միացնող գծեր ունեն, բայց յերբեմն (1-ին տող) փորագրողը ծուռ գծեր և արել: Ս գրերը՝ բոլորն ել բոլորաձև են, բացի 5-րդ տողում 2-րդ անգամ կրկնվողից, վորը մաքուր ուղղագիծ յերկաթագիր եւ Յերկրորդ արձանագրության մեջ պատահող Թ և Ն գրերի մի քանի զծերն ուղիղ են, իսկ մի քանիսը՝ կոր: Բայց այս արձանագրությունն այսքան անվարժ ու տձև գրերով և փորագրված, վոր հայերն արձանագրերը յերբեմն նույնիսկ մինչև անձանաշելիության աստիճանը տգեղ են և միայն գուշակությամբ են կարդացվում:

Այս յենթագրությունը հինգ այդ յերկու արձանագրությունների նկատմամբ ել հիմնավոր չե—նախ՝ այն պատճառով, վոր այդ 4 տառերը տձեռությունը քարի կոշտուկոպտությունից են առաջ յեկել և յերկրորդ՝ այն պատճառով, վոր գրիչներին ծանոթ չի յեղել գրության «անցման միջին» վոճը: Յեթե նրանց ծանոթ լիներ այդ վոճը, այն դեպքում վոչ թե 4, այլ բոլոր 164 գրերն ել այդ վոճով կգրեյին: Այստեղ մեղ կարող են առարկել, վոր այդ սխալները կարող են առաջացած լինել իրականությունից, բայց այդ գեղքում առարկողները թող հիշեն, վոր մեր տասնյակ հազարավոր վիմագրերի և մանավանդ ձեռագրերի մեջ այդ վոճը չի պատահում: Դրան հակառակ, մնացած բոլոր վոճերով ել գոյություն ունեն ամբողջական բնագրեր:

Մեծ խառնաշփոթությունների տեղիք և տվիկ նաև «անցման գիրք»: Սա ուղղագիծ յերկաթագրի և բոլորգրի խառնուրդներ, վոր առաջացել և ուղղագիծ յերկաթագրից բոլորգրին անցնելու միջոցին: Սա արդեն ուրույն գիր չե, այլ յերկու տեսակ

¹ Տես լուսանկար № 4:

² Տես լուսանկար № 5:

գրերի խառնուրդ։ Այդ ե պատճառը, վոր տվյալ դեպքում դի՛
տական ճիշտ հողի վրա կանգնած հեղինակներն «անցման գիրն»
իբրև գրչության առանձին տեսակ չեն համարում, այլ անվա-
նում են «միջին յերկաթագիր՝ բոլորդրի խառնուրդով», յերբ
ուղղագիծ յերկաթագիրը գերակշռողն ե, և «յերկաթագրախառն
բոլորգիր» կամ, մասնավանդ, «արևելյան բոլորգիր», յերբ գերա-
կառող տարրը բոլորգիրն ե։

Դրերի մնացած տեսակների մասին (բոլորգիր, շղագիր,
սոտրգիր) չենք խոսի, վորովինետև նրանց մասին վորեւ գիտո-
ղություն չունենք անելու։ Այդ գրերը բոլորի կողմից ամենայն
իրավամբ համարվել են առանձին տեսակներ և յերեք վեճի
առարկա չեն կարող լինել քանի վոր ունեն իրենց առանձնահա-
տուկ և բնորոշ կողմերը։

Այսպիսով, գրերը տեսակավորելու համար անհրաժեշտ ե
դիմել գրերի գծագրական առանձնահատկություններին։ Այս ե
միակ յերը, այլապես կառաջանան բազմաթիվ թյուրիմացու-
թյուններ, վորպիսիք քննեցինք այս գլխում։ Հստ գծագրական
առանձնահատկությունների՝ գրերը բաժանում ենք հինգ տեսակի
ա) բոլորաձև յերկաթագիր, բ) ուղղագիծ յերկաթագիր, գ) բո-
լորգիր, դ) նոտրգիր, և ե) շղագիր։

Գ. ՀՈՅԱԿԱՆ ԳՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական գրերի տեսակների սկզբնավորության մասին
ընդհանրացած կարծիքն այն ե, վոր Վ դարում Մաշտոցի ձեռ-
քով հորինվել ե միայն բոլորաձև յերկաթագիրը (խոշոր մեսրոպ-
յան, բուն մեսրոպյան, գլխագիր և այլն), իսկ մնացած տեսակ-
ները հետագայում առաջացել են բոլորաձև յերկաթագրից։

Դեռևս 1886 թվականին Հ. Գ. Զարբանալյանը գրել ե.
«Հայտնի յե, վոր սրբույն Մեսրոպա հսարած գրերը, յերկաթա-
գիր ըսվածներն եքին, վորոնց գործածությունը հինգ-վեց
դար տեսեց (406-են ինչվան ժ դար), առանց յերեւելի փոփոխու-
թյան կերպարանք մը առնելու... բայց իններորդ դարուն մեջ
ինչպես հավանական կկարծվի, գրչությունը դյուրացնելու հա-
մար սկսան գրերուն վերին և ստորին կողմերը շիտակ գրել
վորոնք դատ ձև մը ունեցան. և բուն յերկաթագիրը սկսան

զլիագրի տեղ բանեցնել Ասիկա յե միջին յերկաթագիր ընվածը, վոր մինչև ժբ դար և անկե անդին ալ տեհց քիչ փոփոխությամբ: Այս գրերը թեպետ ավելի համեմատ ձեւ ունին, բայց ընթերցումը դժվարին ըլլալուն՝ այս կերպն ալ փոխեցին ու սկսան բոլորգիր տառերն գործածել, վոր կամաց կամաց կատարելագործելով՝ ու կանոնավորելով՝ հիմիկվան տպագրությանց մեջ գործածվող սովորական գիր յեղան:

Բոլորգրույն ավելի դյուրացած կերպն են նոտարացի կամ նոտր գիրը, վոր ինչվան հիմա հասարակ գրությանց մեջ կը գործ ածվի»¹:

Մոտավորապես այս նույն կարծիքն են հայտնել համարյաթե մացած բոլոր ուսումնասիրողները:

Այս կարծիքն ունեցողներն իրենց ասածները հիմնավորելու համար մեջ են բերում հետեւյալ փաստարկումները, վորոնք, ինչպես կտեսնենք, չեն կարող ծառայել հոգուտ նըանց կարծիքի:

1. Բոլոր վիմագրերը՝ սկսած հնագույններից, վոր համարվում են V դարի վերջից կամ VI դարից մինչև X դարը յեղածները, առանց բացառության, գրված են բոլորաձև յերկաթագրով:

2. Բոլորաձև յերկաթագրով են հնագույն ձեռագրերը:

3. Տառերի ծագման պատմությունը պահանջում է, վոր բոլորաձև յերկաթագրերը լինի Մաշտոցի հնարածը, վորովհետև հունական կտոր փակվածքները հայերենի մեջ տալու յեն կոր բացվածքներ՝ ըստ բերանբացության որենքի: Այլական բերանբացության որենքը հանդես չպիտի գար:

4. Ուղղագիծ յերկաթագրով գրված ձեռագրերի հատվածների սկզբնատառերը բոլորաձև յերկաթագրով են: Դրա իմաստն այն ե, վոր հին գրերը նորի համար ծառայեն իրեւ գլխագիր:

5. Հին ձեռագրերի բնագիրը բոլորաձև յերկաթագրով ելինում, իսկ հիշատակարանը՝ ուղղագիծ: Մրանից հետեւում ե, վոր հին գիրը, իբրև ավելի պատվագոր՝ գործ ե ածվել բնագրի համար, իսկ ուղղագիծ յերկաթագրերը, իբրև նոր գիր՝ յերկրորդական տեղ ե գրավել:

1 Հ. Գ. Զարքանալյան — Պատմություն հայ դպրության, մենատիկ, 1886 թ., եջ 55—56.

6. Բոլորաձև յերկաթագրի փորագրելն ավելի դժվար է, քան ուղղագիծները: Յեթև հնագույն վիմագրերը բոլորաձևնով են փորագրված, ապա նշանակում են, վոր ուղղագիծը ծանոթ չի յեղել հնագույն շրջանում:

Այս տեսության դեմ առաջին անգամ կասկած հայտնեց Հ. Տաշանը՝ դեռևս 1897 թվականին: Նա հայերեն գրչության սկզբնական վոր համարեց կամ միայն ուղղագիծ և կամ ուղղագիծ ու բոլորաձև յերկաթագրերը միասին: Նա հայկական գրի տեսակները համեմատության գրեց ասորական գրի տեսակների հետ և յեկավ այն յեղակացության, թե՛ ինչպես վոր ասորական եստրանգելա և Հակոբիկ գրերը, վորոնցից առաջինը համապատասխանում են մեր ուղղագիծ յերկաթագրին, իսկ յերկրորդը՝ բոլորգրին, յերկուսն ել հնարված են յեղել հենց սկզբից, նույնպես և հայերեն գրերի յերկու հնագույն տեսակները (բոլորաձև և ուղղագիծ յերկաթագրերը) կարող եին հնարված լինել Մաշտոցի ձեռքով՝ V դարում:

Տաշյանն իր այս կարծիքը հիմնավորելու համար մեջ են բերել հետևյալ ապացույցները. Թալինի՝ Ուխտատուր վանականի 783 թվականի վիմագրիրը, վորը գրված և ուղղագիծ յերկաթագրով: Յերկրորդ՝ ուղղագիծ յերկաթագրով գրված մի քանի կըրկնագրեր, վորոնք ավելի հին են թվում, քան իրեն ծանոթ հնագույն ձեռագրերը: Յերրորդ՝ Յեզիրապտոսում գտնված մի պապիրուսի կտոր, վորն ունի հայերեն տառերով հունարենի վարժություններ: Բայց Տաշյանի, այդ պապիրուսի կտորը պետք են գըրված լինի արաբների արշավանքից առաջ, յերբ հունարենը տիրապետող եր Արեկելքում, հետևապես գոյնե VII դարի առաջին կեսում: Այդ պապիրուսը գրված է հնագույն արեկելյան բոլորգրով՝ ուղղագիծ յերկաթագրի, շղագրի և նույնիսկ նոտրգրի խառնուրդով:

7. Տաշյանի յերկրորդ և յերրորդ ապացույցները ժամանակը վորոշելու տեսակետից կարող են սխալ լինել բայց նա ավելին չերեւ կարող անել, վորովհետև 90-ական թվականներին հնագույն գրչության նմուշներից շատ քիչ քան եր հրատարակված իրենց նմանահանություններով:

Հայ գրերի առաջացման և դարդացման մասին ընդհանրա-

ցած կարծիքի վերաբերյալ բոլոր փաստարկումներն ել հիմնա-
վորված չեն և դյուքությամբ հերքվում են:

Քննենք այդ փաստարկումները:

Ա. Միանգամայն ճիշտ ե այն կարծիքը, վոր բոլոր վիմա-
գրերը՝ սկսած հնագույնից մինչև X դարը, գրված են բոլորաձև
յերկաթագրով։ Մեր կողմից կավելացնենք՝ բոլոր վիմագրերը,
սկսած հնագույնից մինչև նորագույնը, գրված են բարորաձև յեր-
կաթագրով։ Ճիշտ ե նաև այն, վոր հազարավոր վիմագրերի մեջ
կան մի քանիսը, վորոնք մաքուր բոլորաձև յերկաթագրով չեն
գրված, այլ վերջինիս հետ իտառն են նաև գրի այլ տեսակներ։
Այդպիսիներից կարող ենք հիշատակել՝ 1. Ուխտատուր վանա-
կանի արձանագիրը 783 թվականից, 2. Մարիամ Սյունյաց իշ-
խանունու 874 թվականի արձանագրությունը Սևանում, 3. Սենե-
քերիմ թագավորի 992 թվականի վիմագիրը Սարիղամիշում և
այլն, Բայց դրանք բոլորն ել փորագրիչների անվարժության
արդյունք են՝ ճիշտ այնպես, ինչպես այժմ գրվող գլխագիր ցու-
ցանակների և այլ նման տեքստերի մեջ ՈՒ գրելու փոխարեն գը-
րում են ՈԼ, Յ.Ն գրում են յ ձևով և այլն։

Այդ սխալների առկայությունն ապացույց ե այն բանի,
վոր հնագույն արձանագրությունները կազմելու ժամանակամի-
ջուցում (VII—X դ. դ.) գրության մյուս վոճերը գործածության
մեջ են յեղել, բայց գրիչները չեն ցանկացել դուրս գալ արձա-
նագրությունների համար որինականացված գրչության վոճի
սահմաններից և դրա համար ել գրել են միայն բոլորաձև յերկա-
թագրով։ Այդ նշանակում ե, վոր վիմագրին հատուկ գրչության
վոճը բոլորաձև յերկաթագրին ե և այդ չի բացասում գրչության
մյուս վոճերի գոյությունը, ինչպես կարծել են վերոհիշյալ ու-
սումնասիրողները, մանավանդ վոր այդ հնագույն վիմագրերի մեջ
պատճականորեն գործածված են նաև գրչության այլ վոճեր։

Ստորև բերում ենք առարկության մեջ մտած բոլոր այն
վիմագրերը, վորոնք, բացի բոլորաձև յերկաթագրից, պարունա-
կում են նաև գրչության այլ վոճեր։

1. Տեկորի 964 թվականի խաչարձանն¹ ունի բոլորդիր տա-
ռեր, հատկապես և Կ Ա, Բացի դրանից, նա ունի յ, փոխանակ
Յ ձեր։

1 Տես լուսանկար № 5.

Այս արձանագրությունը գրված է հույժ անվարժ գրչի ձեռքով, այնպես վոր Նրա հայերեն գրելը մեծ դժվարությամբ է և ճանաչվում: Արձանագրությունն ունի շատ սխալներ և տակություններ: որինակ՝ Ատապ բառի առաջին Ա. գիրը կարելի յի կարդալ նաև ու, կտնզնեցի բառի առաջին Ն գիրը չի գրված, իսկ յերրողը նման է Շ գրի: Խաչս բառի Ա-ն նման է Մ-ի: Այս արձանագրության մեջ կան թե յերկատամ և թե յեռատամ Ա. գրեր:

2. Ուխտատուր վանականի 783 թվականի վիմագիրը¹ նույնպես վարժ փորագրելու գործ չե: Քանդակողը գրել և մերթ բոլորաձև և մերթ ուղղագիծ յերկաթագրով, բայց ցանկացել ե բոլորաձև յերկաթագրի նմանեցնել:

3. Անիի 622 թվականին վերագրված արձանագրությունը հետնադարյան գործ եւ Արձանագրության վերջում յերեացող ՀԱ-Ն թվական չե, ինչպես յենթալիել են (622), այլ ՀԱ.ՅՈՒՅ բառի առաջին վանկը: Այս արձանագրության մասին բավականին մեծ գրականություն և առաջացել թե պարբերականում և թե ՀԱ-ում:

4. Մի քանի հնագույն արձանագրություններ եւ մենք կարող ենք հիշատակել, արձանագրություններ, վորոնք վրիպել են այս ինդրով զբաղվողների աչքից: Այդպիսիներից մեկն և Բյուրականի գաշտի յեկեղեցու ՆԼ.Գ-434 (=985) թվականի վիմագիրը, վորն ունի ուղղագիծ նշաններ: Ավելի լավ որինակ կարող և համարվել Սենեքերիմ թագավորի առու շինելուն վերաբերող Ռարիդամիշի կոթողը² 992 թվին²: Վերջինս գրված և բոլոր գրով և միայն մի քանի գլխագիր տառաձեկեր ունի: Այս արձանագրությունն ել չափազանց անվարժ գրչի գործ և, բայց շատ կարենոր և հնագրության համար և, վորպես հնագույն շրջանին պատկանող բոլորգիր արձանագրություն, միակն և իր տեսակի մեջ:

Վերոհիշյալ վիմագրերի մեջ, բացի բոլորաձև յերկաթագրից, գործածված եր նաև ուղղագիծ յերկաթագիր՝ 783 թվականից և

¹ Տես լուսանակը № 4:

² Տես լուս. № 6: Արձանագրությունս առաջին անգամ հրատարակել ե Կ. Յ. Բասմաջյան, «Քանակներ», 1901 թ., եջ 130: Այժմ բարը փոխադրված և վաղղատի թանգարանը:

բոլորգիր՝ 964 թվականից ու 992 թվականից Այսքանն ել բա-
գական ե ապացուցված համարելու, վեր VIII դարում արդեն գո-
յություն ե ունեցել ուղղագիծ յերկաթագիրը և X դարում բոլոր-
գիրը:

Սակայն այս դեռ քիչ եւ:

Մեսրոպ Տեր-Մովսիսյանն ուսումնասիրելով Զվարթնոցի
պատերի վրա այցելուների թողած հնշատակագրությունները,
գրում ե. «Մեր հասկացողությամբ՝ տասնումեկերորդ դարուց ա-
ռաջ բոլորգիրը հայերին անձանոթ եր և հետո ստեղծվեց, իսկ
այստեղ, ուղիղ ընդունելով հիշած տարեթվերը, գտնում ենք մի
քանի գրեր բոլորգրով գրած արդեն ութերորդի սկզբում և ին-
ներորդ դարում»¹:

Այդ նույն արձանագրությունների մեջ կան շղագիր նշան-
ների հետքեր: Դրա լավ որինակն ե մւը և 7 լուսանկարը:

Լազարյան գրչագիր ավետարանի լուսատիպ հրատարակու-
թյան առաջարանում Պրոֆ. Գրոֆ. Խալաթյանը գրում ե. «Համա-
րաբբառների նշանագրերի մեջ հաճախ պատահում ե նույն սկզբա-
նական գրչից բոլորգիր, զոր առանձին ուշադրության արժանի
յի՝ ի նկատք ունենալով Ավետարանի գրության ժամանակը»²:
Այդ ավետարանը հնագույն հայերեն թվակիր ձեռագիրն ե, գըր-
գած հայոց Յ1.9—336 (=887) թվականին:

Ինչպես տեսնում ենք, հնագույն վիմագրերը, նույնպես և
հնագույն (մեղ հասած) ձեռագիրը՝ բոլորաձև յերկաթագրով են
գրված վոչ թե այն պատճառով, զոր գրերի մյուս տեսակներն
այդ ժամանակ ծանոթ չեն յեղել հայկական գրչության, այլ
այն պատճառով, զոր վիմագրերի յել պատճառական ձեռա-
գրերի պատճառական վիճը յեղել ե բոլորաձենվ յերկարագիրը:

Բ. Հայոց հնագույն ձեռագրերը, սկսած ամենահնից, բացա-
ռապես ավետարաններ են:

Այսպես որինակ՝ 1. Լազարյան ձեմարանի ձեռագիրը, զոր
մեր հնագույն թվակիրն ե՝ գրված 887 թվականին, 2. Վենե-

¹ Մերոպոպ Տեր-Մովսիսիան—Եղմիածին և հայոց հնագույն յե-
կեղեցիներ, եջ 80:

² Եջ Բ. Այս ձեռագիրն անտեսելը մի զորեղ ապացույց և այն բանի,
զոր մեջ հնագրությունը դեռևս շատ քիչ ե զբաղեցրել ուսումնասիրներին:

տիկի № 86 ավետարանը՝ գրված 851—922 թվականներին¹, Յ. Մեծ-շենի 909 թվականի ավետարանը, վոր այժմ պահպում և Եջմիածնի ձեռագրատանը, 4. Սանասարյան վարժարանի՝ 986 թվականի ավետարանը, 5. Ծուղրութի՝ 974 թվականի ավետարանը, 6. Անտոնյան միաբանության՝ 966 թվականի ավետարանը, 7. Եջմիածնի հոչակավոր փղոսկրյա ավետարանը՝ 989 թվականից և 8. Լենինականի ավետարանը՝ 988 թվականից:

Վերոհիշյալ բոլոր հնագույն ձեռագրերը գրված են բոլորաձև յերկաթագրով, բայց այդ գեռ չի նշանակում, վոր նույն ժամանակամիջոցում գոյություն չեն ունեցել գրի մյուս տեսակները, մանավանդ վոր հենց նույն ձեռագրերի համարարարանները, ինչպես և մի քանիսի (Ծուղրութի և այլն) հիշատակարանները, փղոսկրյա ավետարանի Յեկաբերի և Կարպիանոսի թղթերը², ինչպես նաև տեղ-տեղ բնագիրը կազմված են ուղղագիծ յերկաթագրով, Հեշյալ ձեռագրի մեջ ուղղագիծ յերկաթագրիը գրիչը գործադրում և ավետարաններում, տողագերջին, յեթե տեղ չի լինում վանկը խոշոր յերկաթագրով վերջացնելու»³:

Ավետարանների կողքին՝ պատմական, վիպական և գիտական բովանդակություն ունեցող մեր հնագույն ձեռագրերը, սկսած հնագույն որինակից մինչև XIII դարը, գրված են մեծ մասամբ ուղղագիծ յերկաթագրով և կամ նշանից առաջացող բոլորգրով ու նոտրգրով, Որինակ՝ մեր թղթյա ամենահին՝ 971 թվականի ժողովածուն (Եջմիածնի մատենադարան, Կարինյան ցուցակ № 102, հին № 2679) գրված և յերկաթագրախառն հնագույն բոլորգրով: Հնագույն կրկնագրերն ես կազմված են ուղղագիծ յերկաթագրով:

Ինչպես տեսնում ենք, այստեղ մի սովորություն, մի որենք գոյություն ունի և այդ այն և, վոր պաշտամունքային ձեռագրերի պաշտոնական վոճը հնագույն ժամանակներում (V—XIII դար) յեղել և բոլորաձև յերկաթագրիը, իսկ վոչ-պաշտամունքայիններինը՝ ուղղագիծ յերկաթագրիը և նրանից առաջացող բոլորգրով:

Յեթե դեռևս IX դարում գրչությանը ծանոթ եր բոլորգիրը

¹ Բարսեղ Վ. Սարգսյան.—Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց իշխանութիւն, հո. Ա. Վենետիկ, 1914, № 86:

² Տես «Շողակաթ», տախտակ իջ:

³ Տես «Շողակաթ», տախտակ իջ:

և մինչև XIII դարը բոլորաձեւ յերկաթագրով եյին կազմվում ընտառյալ ձեռագրերը, ապա գրանից այլ յեղակացության չենք կարող հանգել:

Վոր գոյություն եւ ունեցել գրչության պաշտոնական մի վոճ, վորի պատճառով միևնույն ժամանակին պատկանող տարբեր ձեռագրեր տարբեր գրչությամբ են գրվել, այդ միանգամայն պարզ ե զառնում մեղ համար, յերբ մանրազնին քննում ենք ձեռագրերի գրչության վոճը: Ստորև բերում ենք այդ քննությունների արդյունքները, վոր կատարել ենք ձեռագրերի հրատարակված ցուցակների հիման վրա:

Բոլոր ավետարանները, սկսած հնագույնից մինչև XIII դարը, գրված են բացառապես բոլորաձեւ յերկաթագրով: Առաջին ուղղագիծ յերկաթագիր ավետարանը գրված է 1205 թվականին¹ (Սարգսյան ցուցակ, № 88): Առաջին բոլորգիր ավետարանը գրված է 1212 թվականին (Լալայան ցուցակ, № 49), հաջորդը՝ 1217 թվականին (Սարգսյան ցուցակ, № 136):

XIII դարից սկսած, ձեռագրական արվեստի մեջ պաշտոնական վոճ և գառնում բոլորգիրը: Լալայանի ցուցակում 1212 թվականից հետո կան 432 ավետարաններ, վարոնցից 428-ը բոլորգիր են (XIII—XVIII դարերին պատկանող), 3-ը՝ նոտրգիր (XVII—XVIII դ.դ.) և մեկը՝ շղագիր (XVIII դ.):

Սարգսյանի ցուցակում 1217 թվականից հետո կա 103 ավետարան, վարոնցից 99-ը բոլորգիր են (1217—1814), 3-ը՝ նոտրգիր (XVII—XIX դ.դ.) և մեկը՝ բոլորսանձեւ յերկաթագիր (1229թ.): Վերջինս ինձ ծանոթ ամենառաջ բոլորաձեւ յերկաթագիր ձեռագիրն եւ:

Վեհեննայի ցուցակն ունի ընդամենը 28 ավետարան, վարոնցից 2-ն ուղղագիծ յերկաթագիր (XIV դ.—1222 թ.), 25-ը՝ բոլորգիր (1250—1691 թ.թ.) և մեկը՝ նոտր (1667 թ.):

Ե. Բայազետի ցուցակն ունի 29 ավետարան, բոլորն ել բոլորգիր (1336—1718 թ. թ.):

Թավրիզի ցուցակն ունի ընդամենը 32 ավետարան, վարոնցից մեկը՝ բոլորաձեւ յերկաթագիր (XIV դար), 31-ը՝ բոլորգիր:

¹ Լալայան ցուցակն ունի 1055 թվի միջին մերոպյան ավետարան, բայց դա անվան չփոթություն եւ, վորովհետև ձեռագիրը գրված է բոլորաձեւ յերկաթագրով (№ 44):

Քարամյանի ցուցակն ունի ընդամենը 16 ավետարան, վա-
րոնցից 15-ը՝ բոլորգիր (1432—1707 թ. թ.) և մեկը՝ նոտր (XVIII
դար):

Մնացած մանր ցուցակները նկատի չեմ առնում:

Վեռոհիշյալ թվերից յերկում ե, զոր պաշտամունքային
ձեռագրերը (ավետարանները) յեթե մինչև XIII դարի սկիզբը
գրվում եյին բոլորածն յերկաթագրով, այսուհետեւ, կարճ ժամա-
նակով (XIII դ.) բոլորածներն փոխարինել ե ուղղագիծ յերկաթա-
գրերը, իսկ XIII դարի ընթացքում տիրապետող ե գարձել բոլոր-
գիրը: XVIII—XIX դարերում գրվել են նույնիսկ նոտրգիր ավե-
տարաններ (թեև քիչ թվով):

Ավետարանները մեծ մասամբ գրվում եյին վոչ թե առորյա-
գործածության համար, այլ վորևե սրբատեղում հիշատակ թող-
նելու համար, այդ պատճառով ել նրանց վրա մեծ ծախսել եյին
արվում և գրելը հանձնում եյին նշանափոր զբիչների ու ծաղ-
կող—նկարիչների, իսկ նյութը մագաղաթից եր լինում: Այդ
նույն ժամանակներում թուղթն արդեն գործածության մեջ եր
մտել և համարվում եր չքավորության նշան, «աղքատ քարտէս»
արհամարհական անունն եր ստացել և գործ եր ածվում հասարակ
մատյանների համար, փորոնց գիրն ուղղագիծ յերկաթագիրն եր
և կամ նրանցից առաջացած բոլորգիրը:

Գ. Հայերը չեյին կարող իրենց գրերն ընդորինակիել հունա-
կան կլոր փակվածքներ ունեցող գրերից, վորովհետեւ այդ ժամա-
նակները հունական գրերը՝ գրեթե ուղղագիծ և անկյունավոր
եյին: Մեր ասածը կարող ենք վավերացնել հետևյալ փաստե-
րով:

ա) Ծնիցլերն իր „Иллюстрированная всеобщая история
письмен“ (СПБ, 1906 г.) աշխատության 174—176-րդ եջերում
գրում ե, «Հունական հնագույն ձեռագրերը բնորոշվում են ծայր
աստիճան անհամաշափ և անկյունավոր զրչությամբ, և գրերի
գծագրությունը վոչնչով չի տարբերվում փյունիկյան ու յերրայ-
կան գրերից: Մոտավորապես V—VI դարերում Հունաստանում
մշակվեց մի հատուկ, այսպես կոչված զլիսագիր այրութեն, վորի
գիրն ունի գեղեցիկ և շքեղ ձեւ ու առանձնանում ե իր ուղղագիծ
լինելով, պարզությամբ և խոշորությամբ, զոր յերրեմն հասնում
ե մինչ մեկ մատնաշափի»:

Հստ յերեսութին այս անկյունավոր և ուղղագիծ հունական գրերի ազդեցությունը մեծ գեր է խաղացել հայկական գրերի ձեավորման գործում:

բ) Հայաստանում գտնված հունարեն արձանագրություններն ուղղագիծ գրեր ունեն: Որինակ՝ Տրդատ հայոց թագավորի ապարանյան արձանագրությունը, վորը թէ ժամանակով և թէ իր գտնված տեղով շատ մոտ և մեր գրերի գյուտի ժամանակին և տեղին:

Ցեթե հայերը ծանոթ լինելին հունական թեկուզ միայն կլոր և փակ գրերին, դարձյալ հիմք չել լինի կարծելու, վոր հայկական բոլորաձև յերկաթագիրն ավելի հին ե, քան ուղղագիծը, վորովհետև յեթե հունական կլոր և փակ ձեռքը հայերենում կարող ելին առաջացնել կլոր և բաց ձեռք, ապա ինչո՞ւ չպիտի կարողանային առաջացնել նաև նույն վոճի անկյունավոր և ուղղագիծ գրեր: Ցեթե յենթաղրենք, վոր հունական գրերը փոխ են առել նույնությամբ, ապա ինչո՞ւ հայերենում նրանք բաց ձեռք դարձան, կամ ինչո՞ւ հորինողների ձեռքով նրանք այնքան մեծ փոփոխությունների յենթարկվեցին, վոր այսոր մեծ դժվարությամբ ենք կարողանում վորոշել նրանց ձագումը:

Այս գեպգում հարկ չկա զիմելու գրերի ծագման աղբյուրներին, վորովհետև նրանք շատ հեռու յին կանգնած մեզ ծանոթ ամենահին գրերի տեսակներից, վորպեսզի նրանց միջոցով կարողանայինք վորոշել հայկական գրի սկզբնական գոճը:

Այստեղ չպետք է մոռանանք նաև այն, վոր շատ հեղինակներ գրերի ծագման մասին իրարից խիստ տարրեր յեղրակացությունների յեն հանդել, և այժմ գժվար և այդ բազմաթիվ կարծիքներից միայն մեկի վրա հիմնվելով՝ գրչության այս կամ այն վոճը համարել հայերենի սկզբնական տեսակը:

Դ. Բոլորաձև յերկաթագիրն իրեն գլխատառ գործածվելն ել չի կարող հիմք լինել նրա միակ հնագույն վոճը լինելու համար: Վորովհետև նա մեծ և ամենից չուտ աչքի ընկնող տառաձեռն և, ուստի սկզբնատառերը, վերնագրերը և յերբեմն ել առաջին տողերը գրվել են սրանով, բայց դա գերազանցապես արգած և հատ-

¹ M. Ростовцев—Апаранская греческая надпись царя Тиридата, СПБ., 1911 г. «Անոյ Շաբք» թ 6, եջ 5 և լուսանկար:

ქაბუნებը միմյանցից տարբերիլու և վերնագրներն ու բնագրերը
միմյանցից զանազանելու նկատառություն

Մեր այս յենթագրությունն ապացուցվում է նրանով, վոր
յերբ ձեռագրերի բնագիրը լինում է բոլորաձև յերկաթագիր,
այդ գեպքում ել հակառակն ե արգում, այսինքն՝ վերնագիրը մեծ
մասամբ լինում է ուղղագիծ յերկաթագիր (տես մեր № 2 լուսա-
նկարը): Բնագիրը վերնագրից զանազանելու համար հաճախ վեր-
նագիրը գրում են ավելի մանր գրերով, կամ թե կարմիր գեղով
Շատ անգամ դրանով ել չեն բավականանում և ձեռագիրը զար-
դարում են խորաններով, կիսախորաններով, լուսանցազարդերով
գլխազարդերով ու նկարներով:

Խորանները միշտ լինում են գրքերի հակառաներին. որինակ՝
յուրաքանչյուր ավետարանի սկզբը խորանապատ և լինում:
Հիսախորանները հանդիպում են միայն հատվածների սկզբին և
յերեխն ել գրքերի սկզբին. սա շատ գործածական է աստվա-
ծաշնչի, մաշտոցի, ճաշոցի և այլ գրքերի մեջ, լուսանցազարդերը
հանդիպում են միայն գլուխների ու հատվածների սկզբին և գործ
են ածվում նաև վերոհիշյալ զարդերին զուգընթաց, այսինքն՝
յուրաքանչյուր խորան կամ կիսախորան իր կողքին ունենում
և նաև մի լուսանցազարդ:

Նույն նկատառությունը եւ. իբրև աչքի ընկնող գիր, դնում
են բոլորաձև յերկաթագիր սկզբնատառեր, վորոնք հաճախ զա-
նազան տեսակի զարդագրերի յեն վերածված լինում, ինչպիսիք
են, որինակ՝ թունագիր, ծաղկագիր, կենդանագիր, ձկնագիր,
մարդագիր, հյուսագիր, փառագիր և այլն, վորոնք սովորաբար
յերանգավորված են լինում տարբեր դույներով:

Ցեթե ձեռագրատիբոջ միջոցները թույլ են տալիս ավելի
մեծ ծախսեր կատարելու, այն գեպքում գրքերի առաջին յերես-
ներն ամբողջությամբ գույներով են զարդարում և յերեխն ել՝
պատկերազարդում: Պատկերներն ել, շատ գեպքերում, ցույց են
տալիս գրքի, հատվածի և կամ գլխի սկզբնավորությունը: Որի-
նակ՝ ավետարանների մեջ չորս ավետարանչաց սովորական
պատկերները գրված են լինում յուրաքանչյուր ավետարանի
սկզբին: Այնպիս վոր բոլորաձև յերկաթագիրը գրքերի սկզբին
գործ և ածվել գոչ թե հնության և կամ նրան պատիվ տալու նը-
կատառություն, այլ վորպեսզի վերնագիրը չմիաձուլվի բնագրի հետ:

5. Յեթե հնագույն ձեռագրերի բնագրերը բոլորածե յերկաթագրով են լինում, իսկ հիշատակարանները՝ ուղղագիծ յերկաթագրով, դրանից բնավ չի հետևում, վոր բոլորածեն ուղղագիծ ավելի հին ե, այլ դրանից կարելի յե հետեւցներ, թե՛ չնայած վոր այդ յերկու ձեռքն ել ալյալ ժամանակաշրջանում ծանոթ են յեղել գրչությանը, բայց բնագրերը գրվել են պաշտոնական վոճով, այսինքն՝ բոլորածե յերկաթագրով, առանց ուշադրություն դարձնելու այն բանին, վոր այդ վոճը մեծ տեղ ու խոշոր աշխատանք է պահանջում գրողից:

Կարծում ենք, վոր հիշատակարանը շատ դեպքերում ուղղագիծ յերկաթագրով են գրել, վրացեսզի նա տարբերվի բնագրից, և ընթերցողը շուտ կարողանա գտնել այն: Զի՞ վոր հիշատակարանի մեջ են հանդես գալու և հիշատակության արժանանալու թե՛ գրիչը, թե՛ ստացողը և թե՛ գրիչն ձեռնտու յեղած անձինք:

Չպետք ե մոռանալ, վոր մեր ժամանակներում ել, յերբ ծանոթ ենք գրերի բոլոր տեսակներին, վիմագրերը դարձյալ կազմվում են բոլորածե յերկաթագրով և վոչ վորի մտքովն անգամ չի անցնում շղագիր կամ նոտր վիմագրեր քանդակել, վորակեսղի գործը դլուրին գլուխ գա:

Նույնպես չպետք ե մոռանալ, վոր վիմագիրը կազմվում ե իրեն հավիտենական հիշատակ, իրեկ տիրոջ համար անմահ հուշարձան, վորով տերը ձգտում ե դարեր շարունակ իր հիշատակն արթուն պահել ապագա սերունդների մեջ և, այդ պատճառով, վիմագրի վրա մեծ ջանք ե գործ զնում խնամքով ու գեղեցիկ քանդակելու համար: Մեր խաչարձանները, վոր իրենց քանդակներով յերբեմն զմայլիլի գեղեցկություն ունեն, հիշատակ են թողնված անցած սերունդների կողմից: Ուստի, այս խնդրում եժան պրծնելու և կամ քիչ աշխատանք թափելու հարց չկա, այլ դրան հակառակ, ամեն մի վիմագիր կարգող ուժերը ներսւծին չափ աշխատում ե իր հիշատակն ուշագրավ դարձնել:

Մեր աշխատասիրողներն ամեն կերպ ջանացել են գործն այնպես պատկերացնել, թե գրչության մնացած վոճերն առաջացել են բոլորածե յերկաթագրից, վորովհետեւ, ըստ նրանց կտնիսակալ կարծիքի, Մաշտոցը միայն մի տեսակ դիր ե հորինել, դրա համար ել այդ վոճն անվանել են բուն մեսոպլան յերկարա-

գիր¹: Յեվ յեթե գրերի մնացած տեսակները որուն» յերկաթագրից առաջացած չհամարեն, այն ժամանակ նրանք չեն կարող վորեն յելք գտնել գրերի տարրեր տեսակների դոյությունը բացատրելու համար:

Այս տեսակետից չափազանց ուշագրավ ե հետեւյալ դատողությունը. «Յեթե մեր գրերու զարգացման ընթացքն ե միջին մեսրոպյան և հետո բոլորգիր, այսինքն ուղղագիծեն ուղղագիծ, հապահուր պիտի գրվի գլխագիրը, Բոլորգիրեն հետո չե, վորովհետև պատմականորեն գիտենք, վոր անկե ավելի հին եւ: Զենք կրնար զնել յերկուքին մեջ տեղը, վորովհետև զարգացման ընթացքին կհակառակե, ուղղագիծ, հետո կամարաձև, հետո դարձյալ ուղղագիծ: Կմնայ միայն մեկ տեղ մը և այդ տեղն ե նախ քան միջինը»²:

Կարծում ենք՝ ավելորդ ե ցույց տալ, վոր այս յենթագրությունն անհավանական ե, վորովհետև յեթե ուղղագիծ յերկաթագրից բոլորգիրն անցնելը կատարվում է ուղղագիծ ուղղագիծ, ապա չպետք ե մոռանաւ, վոր բոլորգիրց շղագրին անցնելը կատարվում է ուղղագիծից կորագիծ, կամ, ինչպես իրենք են յենթագրում, բոլորաձև յերկաթագրից ուղղագիծ: Ինչո՞ւ այս կետում (այսինքն՝ կորագիծ ուղղագիծ առաջանալը) հակասություններով զարգացումն ընդունվում է առանց առարկության, իսկ ուղղագիծից կորագիծը՝ անհնարին և համարվում:

Այսպիսով, գալիս ենք այն յեղբակացության, վոր բոլոր այն փաստերը, վորոնք բերված են ապացուցելու, թե հայոց գըրշության սկզբնական միակ վոճը յեղել է բոլորաձև յերկաթագրում, բոլորովին անհիմն են:

Բայց վհրն ե հայոց գրի սկզբնական տեսակը:

Դ. ԿՈՐՅՈՒՆԻ ՎԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մաշտոցի կենսագիր Կորյուն «սքանչելին» գրերի գյուտի մասին խոսելիս՝ հետեւյալ տեղեկությունն ե հաղորդում. «Ի նմին

¹ Հստ յերեւեթին, հնում յերկաթագիր են անվանել միայն բոլորաձև յերկաթագիրը: Հ. Գ. Զարբանալյանը միայն այս տեսակի համար է կոչում «բուն յերկաթագիր», իսկ ուղղագիծը, ինչպես Հ. Տաշյանն է յենթադրում, կոչված պիտի լինի «աղիւսակ գիր» կամ «աղիւսաձև գիր»—անկյունավոր լինելու պատճառով:

² «Հանդէս Ամսօրհայ», 1927 թ., եջ 38:

քաղաքի (Սամոսատ. կ. Ղ.) գրիչ ոմն հելլենական դպրութեան Հեռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրբագոյնս, զկարձն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ¹:

Այս վկայությունը կարող ե վերաբերել կամ հայկական գրերի ձայներին և կամ նրանց գծագրությանը:

Վերոհիշյալ նրբագույն, կարճ, յերկայն, առանձին և կրկնաւոր բառերին ձայնական իմաստ են վերագրել հետեւյալ կերպ:

Նրբագույն. Նշի թեկ կորյունի այս բառն ունի և որինակն ել և մեջ բերում, բայց բացատրության մեջ տալիս ե բառի միայն հիմնական իմաստը, ինչպես՝ «աս նուրբ», «բարսի», «անուր» և այս. ԱՄԲ նրբագույնի համար առանձին ձայնական իմաստ չի հիշատակում: Ունի միայն «նուրբ», վոր և «բարսայնի տեսակ», վոր և պարզ խոռվ»:

Կորյունի նրբագույնը պարզ-խոռվ իմաստը չի կարող ունենալ, վորովհետեւ նրա կողքին չեն հիշատակվում բաղաձայնների մնացած աստիճանները, այլապես պետք ե յենթադրենք, վոր Մաշտցը հորինել և միայն պարզ-խոռվ բաղաձայնները:

Կարճ. Նշի բացատրում ե՝ «կարճ տառ կամ վանկ»: Կորյունն այս դեպքում խոսում ե վոչ թե վանկի մասին, այլ նշանագրերի ընտրության և նրանց ձևավորման մասին, այդ պատճառով ել կարճ, ինչպես նաև յերկայն բառերը վանկ ընորոշող անուններ չեն կարող լինել: Այնուհետև՝ կարճ և յերկայն (յերկայն, այսինքն՝ բացականչության նշան) (՝ուհեցող բառեր, իսկ կարճ՝ հատու, շեշտ ունեցող), յեթե այդ իմաստով գործածված լինի, այն ժամանակ պետք ե կորյունը թվեր նաև առողանության մնացած 9 նշանների անունները: Բացի դրանից, ավյալ որինակի մեջ խոսքը չի կարող այդ մասին լինել, վորովհետեւ նա նշանագրերի ընտրության մասին ե խոսում:

Հայերենը չունի յերկար ու կարճ ձայնավորներ, ինչպիսիք ունի հունարենը, վորպեսզի կարելի լինի կարծել, թե այդ բառերը վերաբերում են ձայնավորների յերկարությանը: Մնում է կարծել վոր մեզ հետաքրքրող բառերը վերաբերում են դրչության վոճին:

¹ ՄԷծ կորյուն, եջ 19. Վենետիկի հրտարակություն

Առանձին.—Այս բառը ՆՀԲ համարում ե «պարզ, անխառն գիր», յերևի առանձին տառանշանի իմաստով, վոր միացած կամ փակված չե այլ տառանշանների հետ։ Սրան ձայնական իմաստ չեն վերագրել։

Կրինավոր.—ՆՇԲ ունենալով միայն կորյունի վկայությունը, շփոթել ե քերականաց կրինակ բառի հետ և այդ պատճառով համարել ե կիսաձայն։ ԱՄԲ թեև որինակը մեջ ե բերել բայց զգուշացել ե բացատրությունից։

Ուսումնասիրողներից Ն. Տաղավարյանը կորյունի վկայության մասին յերկվության մեջ ե մնում Նա գրում ե. «Խոստովանիմ թե չեմ կարող լավ թափանցել կորյունի վկայության միտքն, սակայն այնպես թվի՝ թե հայերեն գրերուն զանազան դասակարգերն կը թվե, զնըբազույննն, այսինքն յ և ը և այլն, ոկարձն և զերկարն ըսկով կակնարկե իրարմե ավելի կամ խիստ նույնատեսակ հնչում ունեցող գրերն, վորպես բ, պ, փ, —ս, դ, ր, —ծ, ց, ձ, —գ, կ, է, —չ, ն, օ և այլն, իսկ զառանձին և կրկնավորն բառերով կամի հիշել ը, ո և ւ, վ»¹.

Այս յենթագրությունը շատ անհիմն ե, բավական ե միայն ասել, վոր Վ դարում, յերր Մաշտոցը հայոց գրերն եր հորինում, և կ վ նույն հնչումները չունեյին և վոչ ել ր և ո, այլապես նրանք չեյին հորինվի, կամ կարձ և յերկար բոլորովին չեն կոչված նույնտեսակ հնչումների յերեք աստիճանները, վորոնք են թրթոռն, խուլ և շնչեղ խուլ։ Այս անհարմարությունները, կարծես, ինքն ել զգալով, անմիջապիս ավելացնում ե՝ ռվաճական

1 Դակա. Ն. Տաղավարյան—«Ծագումն հայ տառերից»։ Մոտավորապես նույն կարծիքն ե հայտնում նաև պրոֆ. Մարկվարտը կորյունի հիշատքաների առթիվ նա գրում ե. «Տեղեկության իմաստը թույլ կուտա մեկի այժմ իսկ սոսուգել գոնե այն, փոփոխություններն մին, զոր Մաշտոց հետը բերած աղբարեսակներուն վրա ըրավ. առան ձին և կը կնապոր նշանագրերով նախ պետք ենք հասկանալ և ե Ռ, ինչպես նաև ի և Վ, վորոնցմն Ռ և Վ միայն ոկզրնատառ կը կազմեն թե Լ և Ր Ղ-ի և Ռ-ի համեմատությամբ «բուն» ձայն կամ նշանագիր նկատված են, կապացուցվի նաև այնու, վոր ոտար բառերու և անվանց ոկզրնատառ և ւ գրերուն տառապարձության մեջ յերկու ձեւերն այսպատճը գործածական են. նաև աղբարետքի մեջ հույն և ի տառերուն տեղը կը գրավեն։ Կարձ և յերկայն նշանագրերով, ընդհակառակն, պիտի իմանանք անշուշտ, ձայնավոր նշանագրերու։ (Յ. Մարկար Պատմութիւն հայերէն նշանագրերու, Վիեննա, 1913 թ., էջ 31).

չեմեր սույն կարծիքն, թե մի գուցե նըբագույն ըսելով՝ նոտր գրեթեն ակնարկել ուզե, զկարձն և զերկարն ըսելով՝ նմանորինակ յերկու դասակարգ գրեր, յերկար ու կարճ իրենց հասակով, և առանձին և կրկնավորն ըսելով՝ կամի ակնարկել թե վոչ միայն այլ գրելու առանձին ձեւերն գրեց, այլ և նոցա յերկու առ յերկու միացյալներն, վորպես թե, Սի, Մի, Մէ, Մի և Մն»¹.

Կորյունի նույն վկայության մասին Մ. Վ. Պարոնյանը գրում է, թե Մեսրոպ «կանցնի ի Սամոսատ քաղաք, ուր Հռովանոս ոմն յոյն ճարտար գրիչ մի կար, նորա օգնութեամբ զամենայն ընտրութիւնս նշանագրոյն յօրինէ»²:

Հ. Գ. Վ. Զարբանալյանը Հռովանոսին միայն գեղագրության գեր և վերագրում իր հիտելյալ տողերով՝ «Մեսրովպ զնաց առ Հռովանոս, և պատմեց իրեն տեսիլքը՝ ու կերպերը բացատրեց, վոր իր ճարտար գրչովն վայելուչ ու գեղեցիկ ձեւը տվակ նույն տառերուն»³:

Հռովանոսի գերն աղելի յե պարզվում Մ. Խորենացու վկայությամբ, ըստ վորի Հռովանոսը կոչվել և «Հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեան», Այնուհետև Խորենացին պատմում է. «...եստեղ զնշանագիրս մեր՝ հանդերձ Հռովանոսիւ կերպածեալ զգիրն առ ձեռն պատրաս Մեսրոպայ, փոխադրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթագութեան սիւղոբայից հելլենացւոց»⁴:

Դոկտ. Ն. Տաղավարյանը, վոր Կորյունի վկայության պատճառով տատանաման մեջ եր ընկել, Խորենացու վկայության մասին գրում է. «Խորենացվույն վկայութենեն այնպես կը կարծի՞թե Հռովանոս վարժ գեղագիր մ եր և Մեսրոպա գտած գրերուն վայելուչ ձե մը տվալ»⁵:

Վոր Հռովանոսը միայն հայերեն գրերի ձեւ տվեց, և Կորյունի վկայությունը վերաբերում է հայերեն գրերի գծագրությանը և վոչ թե նրանց ձայներին, կարող ենք բերել նաև հետեւյալ ապացույցները.—

1 Դերջիններու գրված են փակագրով:

2 «Երկրագունու», 1884, եջ 498; «Հայկական նշանագիրք» հոդվածը:

3 Հ. Գ. Վ. Զարբանալյալ հայ — Պատմութիւն հայ դպրութեան, վենետիկ, 1886 թ, եջ 36:

4 Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց, Աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ա. Յարութիւնեան. Տիգիս, 1913. Գիրք Գ, գլ. ԾՊ, եջ 327.

5 «Մագումի հայ տառից», եջ 34.

ԱՅՀԵԲԱՅՆԵՒՅ
ԽՈՎՀԱՐԻՄՔԻՐԱՅ
ԵՐՐԻ · ԹԵՎԱԿԱՅՑԱ
ՄԱԿԱՐԻՄՔԻՐԱՅ

ՅՆՈՍ
ՄԻՄՐԵՐԵԲԵԼԻՌՈՂՈՎԸ
ՐԴՆ. ՄԱՐԵՋԻՅԱՅԻՐ
ՏՈՒՄԻՌԵՐԵՐԵՐ

Լուսանկար № 1ա. Բոլորածեվ յերկարագիր՝ փակտզիր նւանով.

ա) Մեծ Կորյունը, ձայների մասին խոսք բաց անելիս՝
 միշտ գործ և ածում սիւղօբայ և կապ բառերը, վոր ձայնավորով
 դիր ունենալու վոճն և ակնարկում, այսպիս որինակ՝ «իսկ
 իրեկ ի զերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն ողջ ածել
 զսիւղօբայս և զկապս հայերէն լեզոյն» (եջ 18), կամ՝ «և անդ
 վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ յօրինէր սիւ-
 ղօբայիւք և կապօք» (եջ 19). Իսկ մեր բերած վկայության մեջ
 սիւղօբայի և կապի մասին վոչ մի խոսք չի ասում:

բ) Մաշտոցը, Հռոմիանոսին զիմելուց առաջ, արդեն ունել
 հայերեն հնչյունների լիակատար ցանկը: Կորյունն այդ մասին

պատմում ե հետեւյալը. Մաշտոցը Դանիելյան գրերի պակասը լը-
րացնելով՝ «Հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքան-
չելի սուրբ աջողս իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ առդ
վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ յօրինէր սիղոբա-
յիւք և կապօք»: Սրանից հետո միայն Մաշտոցը դնում ե Հռո-
փանոսի մոտ:

Արդ, յեթե Կորյունի նրբագույն, կարճ, յերկայն, առան-
ձին և կրկնավոր բառերը ցույց են տալիս գրերի գծագրության
մոնը, այս գեղքում ել կարելի յե հասկանալ յերկու կերպ:

ա) Կարելի յե յենթագրել վոր այդ բառերը կարող են
ցույց տալ միևնույն այբուբենի ներքին շարքերի անուններ. ա-
սենք—կարճ՝ միջնական տառածեեր (ա, ս, ո, ւ, ու և այլն), յեր-
կայնը՝ ամբողջական գրեր (թ, ի, խ, վ, փ):

Յեթե ընդունելի համարենք մեր այս յենթագրությունը,
այդ գեղքում պետք ե ընդունենք նաև, վոր Մաշտոցը, բացի
յերկաթագրից, հորինեց նաև կրերի այլ տեսակ, վորովհետև յեր-
կաթագրիը հիշյալ բարձրության աստիճաններից զուրկ մի ժա-
պավինատիպ վոն ե, իսկ հիշյալ աստիճաններն ունեն միայն բո-
լորգիրը, շղագիրը և նոտրգիրը:

բ) Կարելի յե նաև յենթագրել վոր Կորյունի հիշալ հինգ
բառերը ցույց են տալիս վոչ թե միևնույն այբուբենի ներքին
շարքերը (գրերի բարձրության աստիճանները), այլ այդ բառե-
րից յուրաքանչյուրը գրչության մի նոր տեսակի անուն ե (յերկաթագրի, բոլորգիր, նոտրգիր և այլն):

Յեթե առաջին յենթագրությունը ճիշտ համարենք, այդ
գեղքում պետք ե ընդունենք, վոր Մաշտոցը հորինել և միայն
նոտրգիրը, վորովհետև բարձրության աստիճաններ ունեցող գրե-
րից միայն այս տեսակի ծագումն ե մեզ անհայտ, իսկ քանի վոր
բարձրության աստիճաններ ունեցող գրերի մյուս տեսակների
ծագումը մեզ հայտնի յե, ուստի չենք կարող յենթագրել, վոր
նրանք Մաշտոցի ստեղծագործությանն են պատկանում: Նոտրգիրն
առաջ չի գալիս մեր ունեցած գրերի և վոչ մի տեսակից, իսկ բո-
լորգիրը, ինչպես պարզ յերկում ե գրչության բազմաթիվ մա-
ցորդներից, առաջ և գալիս ուղղագիծ յերկաթագրից: Նույնպես
և շղագիրը: Սա առաջ և գալիս բոլորգիր և կամ, ավելի ճիշտ
կլինի ասել՝ ուղղագիծ յերկաթագրի ուշ ժամանակի տեսակներից:

Իբրև անցման շրջանի գրչության որինակ, յերբ ուղղագիծ յեկաթագրից առաջանում ե շղագիրը, կարող ենք հիշատակել Եջմիածնի հին ժողովածութ ^{Ն 1239/1214} ձեռագիրը (Կարենյան ^{Ն 1209}), զոր և «մեկնութիւն մարդարէութեան եսայեայ», գրած հայոց Շկե (1118) թվին: Սրա գիրը հին արևելյան բոլորգիրն ե շղագրի խառնուրդով¹: Նման գրչություն ունի և Միհիթար Այրիվանեցու ճառընտիրը՝ գրած ԺԴ գարում², զորն ունի արևելյան անցման բոլորգիր՝ շղագրի խառնուրդով:

Մեզ հավանական չի թվում, զոր Կորյունն իր կատե, երբագույն, յերկայն բառերը գործածած լինի այբուբենի ներքին

		348
		աշխարհական ոց
		քրվացնութեազօն
		և առօթն
		Երևանի Հայութիք
		ու առափական է բ
		ջառնացնութեաց
		դալազնութեաց
		Զաքուրցուք և Ե
		Ազուրցնութեաց
		ու Առայնութեաց
		ոզմնեաւ:
		Յերանձն ե Երե
		Քաջնորդութեաւ:

Լուսանկար № 1բ. Թոլուածեվ յերկարագիր. Վերնագիրն ուղղագիծ յերկարագրով.

1 Նմանահանությունը տես «Գրչության արվեստ», թ. 60, տախտ. Ծ:

2 Եջմիածնի հին ժողովածութ ^{Ն 1500/944} (Կարենյան ^{Ն 924}), տես մեր մ. 7 լուսանկարը:

շարքերը ցույց տալու համար: Յեթե կորյունը մանրամասնաբար ցույց և տակիս գրի ներքին կազմի կերպերը և վոչ մի բառ չի ասում յերկաթագրի հորինման մասին, վոր ճարտար գրչություն պահանջող հայերենի գեղեցիկ ու պատվավոր տեսակն ե, և յեթե կորյունը հիշատակում ե, վոր նոտրգիրն ունի զանազան բարձրության տառաձեր, ինչու վոչ մի խոսք չպետք ե ասեր յերկաթագրի ժապավիշնատիպ լինելու մասին: Նշանակում ե, վոր կորյունի այդ վկայությունը տառաձերի ներքին կառուցվածքի մասին չե, և յեթե մեր այս կարծիքը հավանական համարվի, այն գեպքում մնում ե յեղրակացներ վոր այդ վկայությունը վերաբերում է միայն մի քանի տարրեր տեսակների պատկանող տառաձերի, տարրեր գրչության վոճերի, այսինքն՝ Երբազար, կարև և յերկայն բառերից յուրաքանչյուրը գրչության առանձին վոճերի հնագույն անուններն են լինելու:

Այս յենթադրությունը հաստատվում ե նաև հետեյալ դրական ապացույցներով.—

ա) Գրչության մնացորդների նախնական տառաձերով.

բ) V դարի ասորական և հունական տառաձերի վաճով, վորոնցից հայերն աղդեցություն պիտի կրած լինելին, և

գ) Հայոց գրի զարգացման պատմությամբ:

Վերջին կետով մենք ծանոթանում ենք այն տառաձերին, վորոնք առաջ են գալիս պատմության ընթացքում այլ տառաձերից, հետեւապիս նրանք չեն կարող հորինված լինել Մաշտոցի ձեռքով:

Տառաձերի հնության մասին տարրեր ուսումնառիրողներ տվել են զանազան թվականներ: Ավելորդ չի լինի այստեղ մեջ ընթաց գլխավոր թվականները, քանի վոր այդ թվերի հետման վրա յեն նրանք կազմել իրենց կարծիքը հայոց տառաձերի հնության մասին:

1 չ. գ. վ. Զարբանալյանը տալիս ե հետեյալ թվականները¹.


Բոլորաձև յերկաթագիր՝ 406 թվականից մինչև XIII դարը:

Ուղղագիծ յերկաթագիր՝ IX դարից մինչև XII դարը:

Բոլորգիր՝ XII դարից հետո:

Նոտրգիր՝ առաջանում ե բոլորգրից:

Պատմութիւն հայ գլորութեան, եջ 55—56:



Խուսանկար № 2. Բոլորաձեվ յերկարագիր, վերևագիրն ուղղագիծ յերկարագրով.

Այս թվերը կրկնել են նաև հետագայում, նույնիսկ իսահակ Հարությունյանը, չսայած վոր այդ թվականների հրմքը վաղուց արդեն խախտված եր Տաշյանի ձեռքով:

Հ. Տաշյանը տալիս են հետեւյալ թվականները, վորոնք հիմնված են վոչ թե յենթադրությունների, այլ իրական մասցորդների վրա:

Բոլորաձեւ յերկաթագիր՝ VI դար (Յերուսաղեմի Մողայիկ):

Ուղղագիծ յերկաթագիր՝ 989 թ. (Փղոսկրյա ավետարան):
Բոլորգիր՝ 999 թվականից: Արևելյան բոլորգիրը՝ 971 թվականից:

Շղագիրը՝ X դար:

Հնագույն թվականների վորոնելու այս յեղանակը շատ սխալ ե գրերի տեսակների հնությունը վորոնելու համար, վորովհետև վիմագրերի մեջ նոտրգիր վորոնելն ապարդյուն գործ ե, ինչպես և առանին գործածության համար գրվող նորագույն ձեռագրերի մեջ բոլորաձև յերկաթագիր վորոնելը:

Նշանակում ե՝ քանի վոր մեր ձեռքը հասած վիմագրերի հնագույն որինակն ունի բոլորաձև յերկաթագիր, պետք ե յենթագրել, վոր նա իր գոյության սկիզբն առնում և հորինման ժամանակներից, մանավանդ վոր նրա առաջանալը գրի այլ տեսակներից՝ անհայտ ե:


Եռևյնն ենք ասելու նաև նոտրգրի մասին: Նոտրգիրը հնում համարվում եր շղագրին նախորդող տեսակը, բայց գրչության հնագույն նմուշներն այժմ շղագիրը տանում են մինչև X դարը, իսկ հնագույն նոտրգիրը 1291 թվականից ե, այդ պատճառով ել չ. Տաշյանը յենթագրում ե, թե նոտրգիրն ավելի ուշ ե առաջացել քան շղագրը, բայց, դրան հակառակ, յեթե հնագրությունը ծանոթ ե շղագրի ծագմանը և գիտե, վոր նա սկիզբ ե առնում արևելյան բոլորգրից (անցման բոլորգրի), և նրա առաջացման ժամանակը մեզ հայտնի յի, ապա նոտրգրի ծագումն անհայտ ե: Ի՞նչ հիմք ունենք յենթագրելու, վոր նա զրի նորագույն տեսակ ե, չե վոր նու գործածիած և առանին գրագրության մեջ, արինի վայրին վագերագրերում, վորոնց մեզ հասած հնագույն որինակն անգամ զրի այդ տեսակով ե զրված:

Սակայն գրիները յերբեմն շեղվել են իրենց որինական ուղիներից և զրի պաշտոնական վաճերի մեջ խառնել են այլ տեսակներ, վորոնցից կողմնակիսորեն իմանում ենք, վոր զրերի այդ տեսակներն ավելի հնից են զալիս: Որինակ՝ յեթե X դարից ավելի հին վոչոպաշտամունքային հասարակ մատյաններ չունենք, հետեւապես և չենք ունենալու X դարից ավելի հին ուղղագիծ յերկաթագիր, բայց բոլորաձև յերկաթագրով կազմված վիմագրերի մեջ պատահաբար տեղ են գտել ուղղագիծ յերկաթագիր ձևեր, վորոնք ապացույց են այն բանի, վոր զրի այդ տեսակն արդեն հնագույն ժամանակներում ել (VIII դար) գործածական ե յեղել: Այս տեսակետից ել հետաքրքրական են այդ աղյուսակները, յերբ թվականների հետ զրված ե նաև ինչ նյութի վրա գրված լինելը:

3. Ստորև գետեղում ենք մեր աղյուսակը:

Բոլորածի յերկարագիրը՝ վիմագրերի մեջ՝ VI դար (հնագույն որինակ), ձեռագրերի մեջ՝ 887 թ. (հնագույն որինակ):

Ուղղագիծ յերկարագիր՝ վիմագրերում՝ 786 թ. (Ուխտատուրի խաչարձան): Ձեռագրերի մեջ՝ 887 թ. (հնագույն որինակ): Աղյուսների վրա՝ VII դար (հնագույն որինակ)¹:



Լուսանկար № 3. Ուղղագիծ յերկարագիր.

¹ ՏԵՌ մեր № № 2, 3 և 4 տախտակները:

Բոլորգիրը՝ վիմագրերի մեջ՝ VII և VIII դարեր (Դվինի
աղյուսների վրա և Զվարթնոցի արձանագրություններ): Զե-
ռագրերի մեջ՝ 887 թ. (հնագույն որինակ):

Նոտրգիր՝ վիմագրերի մեջ չիք: Զեռագրերում՝ 1291 թ. (ար-
խիվային վավերագրերից հնագույնը):

Եղագիր՝ X—XI դ. գ. (Շողակաթ, № 46), բայց ժամանակը
կասկածելի յի: Վիմագրերի մեջ՝ IX դար (Զվարթնոցի արձանա-
գրությունների մեջ՝ անցման խառն շղագիր):

Աղյուսակից յերկում ե, զոր արդեն հնագույն ձեռագիրը,
քացի բոլորաձև յերկաթագրից, պարունակում ե նաև ուղղագիծ
յերկաթագիր և բոլորգրի հետքեր: Այդ նշանակում ե, զոր մեր
ձեռքը չեն հասել սկզբնական աղբյուրներ և մեր ունեցած հնա-
գույն որինակները շատ հեռու յեն սկզբնական լինելուց, այսինքն՝
նրանք արդեն բավականին փոփոխությունների յեն յենթարկվել:
Դրան ապացույց կարող ել լինել այն, զոր մեր հնագույն ձեռա-
գրի լուսանցագրությունների մեջ ուղղագիծ յերկաթագիրն
արդեն անցման շրջան ե ապրում:

Դրերի զարդացման ընթացքն այս հարցում մեզ ագելի մեծ
ոգնություն ե ցույց տալիս: Ինչպես արդեն ասել ենք, մեզ ծա-
նոթ են բոլորգրի և շղագրի ծագումները, գրի այդ տեսակները
մոտավորապես միենալու ժամանակ են առաջ գալիս, հետևապես,
դրանք, իբրև հետագայում առաջացող տեսակներ, չեն կարող հո-
գինված լինել Մաշտոցի ձեռքով: Այնպես զոր այդ յերկու տեսա-
կի գրերը մի կողմ ենք թողնելու գրի սկզբնական տեսակները
վորոշելու միջոցին:

Ինչպես գիտենք, Մաշտոցը հայոց նշանագրերն ստեղծեց՝
հետևելով ասորիների և հույների գրչության: Այդ պատճառով ել
նրանց ձերն ու կողծածության յեղանակները մեծ ազդե-
ցություն պիտի ունենային հայկական տառաձերի վրա:

Հունական տառաձերից մեզ ծանոթ ե յերկու վոճ, վո-
րոնք գոյություն են ունեցել V դարում: Դրանցից մեկը հունական
գլխագիրն ե, զոր համապատասխանում ե մեր յերկաթագրին.
ունի թէ բոլորաձև և թէ մեծ մասամբ անկյունավոր նշաններ:
Բոլորաձև են՝ E—epsilon, Θ—theta, Ο—omicron, Σ—sigma,
Φ—psi և Ω—omega տառանշանները, իսկ մնացածները գրեթե
բոլորն ել ուղղագիծ են:


Հունարենի յերկրորդ տեսակ տառաձելը բնագրում գործած-
վողն և, վորը համապատասխանում և մեր արևելյան բոլոշգրին:

Ասորիների յերկու տեսակ նշանագրեր ունենալու մասին հայ
համարությանը ծանոթացրել են. Տաշյանն իր «Ակնարկ մը . . .»
աշխատությամբ:

Վ դարում ասորիներն ունեցել են յերկու տեսակ տառա-
ձելեր. եսրանգելա, վոր համապատասխանում և մեր ուղղագիծ
յերկաթագրին և հակոբիկ, վոր նման և մեր բոլորգրին:

Թէ հույների և թէ ասորիների հիշյալ գրերից և վոչ մի
տեսակը հասարակ կարիքների ծառայեցնելու հարմարություն
չունի, վորովհետև բոլոր տեսակները գեղագրական հատուկ շնորհք
և մեծ վարժություն են պահանջում գեղագրողից:

Սակայն մենք գիտենք, վոր հին աշխարհում, զեռևս յեպիպ-
տոսյան շրջանում, սովորությունն ե յեղել յերեք տարրեր վո-
ճեր գործածել գրչության մեջ՝ յերեք տարրեր նպատակների



Լուսանկար № 4. Թալինի Ուխտատուր լիանականի 783 թվի
արձանագրությունը.

ՄԼՔԹՈՒԿԱԱՆՈՒԹԵԱՆՀԱՅ,
~~Ո~~ԶԵՍՈՒԽԱՅՅՈՒՐՎԱՆԱՅ,
 ԿԱՅՍԵՒՐՈՒՐԻԵՂՎԱՅՐԻՄՔԵԸ,
 ԱՌ ԱՆՔԻ ՐԱՅԻՄԻ՞ԱՐԿԱՊԱ
 ՆՈՒՎԱՄԵՆԻՐԱԼԻՐԵՅԻՇՐԱ,
 ՆԱՖՈՔԻԼԵ ԻՄՄԵՂԱՖՈՐԱՐ
 ՈԱԿԱՆԵՂ[Ի]ՑԻ

Վերծանուրյան Ուխտաւորի առձանագրության.

Համար: Շնիցլերը Յեղիպտոսի մասին գրում ե. «Հիերողլիֆները
 մնացին գործածության մեջ միայն վորմագրության համար,
 հիերատիկ գիրը՝ կրոնական այլ նպատակների համար, իսկ դե-
 մոտիկը գարձագ դիվանային գիր և գործածվեց առանին կյան-
 քում»¹.

Հունական հնագրությանը ծանոթ և գրչության մի հասա-
 րակ վոճ, վորն իր հնագույն իրական մնացորդով հայտնի յէ Վ
 զարից, բայց նա այդ գարում արգեն խիստ զարգացած և և
 նման չե այլ վոճերի. այդ տեսակը կոչվում և Մանիսկուլ: Յեթե
 սա առաջացած լիներ մի այլ տեսակից, այն դեպքում այդ պիտի
 տեղի ունեցած լիներ բավականին վազ, քան Վ զարը:

Ասորիները նույնպես ունեն գրի մի հասարակ տեսակ, վորը
 կոչվում և պետքու. սրա ծագման ժամանակը նույնպես անհայտ ե:
 Այդ հասարակ տեսակները թե հունարենում և թե ասորերենում
 գործ են ածվել միայն առանին կարիքների համար:

Յերբ հայերն ասորական և հունական գրերի ազդեցությամբ

¹ Шницлер, „Иллюстрированная всеобщая история письмен,” стр. 67.

հորինեցին իրենց գրերը, պարզ ե, վոր նրանցից փոխ եյին առանձլու նաև գրչության կերպերը. այդ ժողովուրդների որինակին հետեւլով՝ պետք ե հորինեյին գրի մի առանձին տեսակ՝ վիճակին համար, մի հատուկ վոճակ ձեռագրերի համար և մի յուրատեսակ գրչության վոճակ առորյա պետքերի համար:

Մեր քննությունները ցույց տվին, վոր Վ դարում հայերը կարող եյին ունենալ միայն յերեք տեսակ տառաձեւր, քանի վոր հայկական գրչության բոլոր հինգ տեսակներից միայն յերեքի ծագումն ե մեղ անհայտ և, ինչպես ցույց տվինք, այդ յերեքը հիմնական վոճակ են, վորոնք գործ են ածվել յերեք տարբեր նպատակների համար, ինչպես այդ սովորություն եր հին աշխարհում: Մենք այդ ապացուցեցինք մի շարք տվյալներով:

Մեր քննություններից ստացած արդյունքներին հակառակ, կորյունը հիշատակում ե վոչ թե յերեք, այլ գրի հինգ տեսակները: Սակայն յերբ ուշադրությամբ հետևում ենք կորյունի հիշատակած հինգ անուններին, տեսնում ենք, վոր և շաղկապի միջոցով առաջին յերեք բառերը միացած են միմյանց, իսկ վերջին յերկուսը՝ միմյանց, այսպես. «Զնրբագոյնս, զկարճն և զերկայնն, զերկայնն բառից հետո ստորակետը զառանձինն և զերկնաւորն» բաժանում ենախորդ բառերից: Բացի զրանից՝ առանձին բառը պարզորոշ կերպով նշանակում ե առանձին գրփող տառանիշ, ինչպես արդեն վաղուց կուհումներ յեղել են այդ մտախն, իսկ առանձին բառին հակադրվող կրկնավոր պետք ե նշանակի մի այնպիսի առանձան, վորը չի կարելի անվանել առանձին, այսինքն այնպիսի մի տառանձան, վորը պարզունակում ե յերկու կամ ավելի տառանձների պատկեր և գաղափար, վոր, պարզ ասած, պետք ե նշանակի փակագիր:

Այստեղ հարց ե ծագում, թե արդյոք գրչության հնագույն նմուշները մեղ իրավունք տալիս են կարծելու, վոր փակագրերը հորինել ե Մաշտոցը, և մեր գրչության հնագույն նմուշները փակագրեր պարունակում են:

Եերբ ձեռնամուխ յեղանք այդ հարցի քննությանը, տեսանք, վոր այս, գրչության հնագույն նմուշներն անդամ պարզունակում են փակագիր նշաններ:

Վորպես մեր քննության արգասիք, կտղմեցինք փակագրերի մի տախտակ, վորի մեջ ցույց տվինք փակագը բոլոր տեսակ-

Ների պատկերները և հիշատակեցինք, թե ավյալ պատկերն առաջին անգամ զնութեղե գրվել Հարմարության համար այդ տախտակի մեջ փակագրերը դասավորեցինք ժամանակագրական կարգով:

Արդ, փակագրերի խնդիրը հաջորդ գլխին թողնելով, այժմ քննենք Կորյունի վկայության առաջին յերեք բառերը:

Այսպիսով, յեկանք այն յեզրակացության, վոր Մաշտոցի ձեռքով հորինված բոլորաձև և ուղղագիծ յերկաթագրերը, ինչպես և նոտրդիրը համապատասխանում են Կորյունի վկայության Երագույն, կարեն և յերկայն բառերին:

Նրբագույնը, կարծում ենք, նոտրդիրն ե, վորովհետև յերկաթագրի և վոչ մի տեսակը չի կարող հարմարվել այդ անվանը, մանավանդ վոր նոտրդիրը, իբրև նոտարներին հատուկ գրչության վոճ, գրի ամենանուրը տեսակն ե:

Կարճ, կարծում ենք, ուղղագիծ յերկաթագրիրն ե, վորի յերկարությունը գրերի թե վերակից և թե ներքեկից սահմանափակվում ե ուղիղ զծերով, և յերեք չի հասնում այնպիսի մեծության, վորպիսին ունենում ե բոլորաձև յերկաթագրիրը:

Յերկայնը՝ բոլորաձև յերկաթագրիրն ե: Կորյունն իրավունք ուներ յերկայն կոչելու, վորովհետև նույնիսկ ձեռագրերի մեջ հանդիպող բոլորաձև յերկաթագրիր նշաններն ունենում են մի քանի սանտիմետր յերկարություն¹:

Մեր ձեռքի տակ յեղած վկայությունների հիման վրա ի վիճակի չենք ավելի ուժեղ փաստերով խոսելու և վերջնական յեղակացությունների հանգելու: Դրա համար անհրաժեշտ են յոր տեղեկություններ և, մանավանդ, գրչության հնագույն նմուշների նոր հայտաբերումներ:

Այնուամենայնիվ, Կորյունի վկայությամբ, կարծում ենք, հնարավոր յեղավ խախտել գրի սկզբնական տեսակների մասին յեղած տրաղիցիոն տեսությունը և առաջ քաշել գրչության վոճի սկզբնական յերեք տեսակների գոյության խնդիրը:

1 Յերկաթագրը անունը վուանք կապում են յերկաթե գրչով գրեւու և վուանք ել յերկաթե ժանգից թանաք պատրաստելու հետ: Մեզ թվում ե, վոր այդ անունը կապվում և վիմագրերը յերկաթե բրիչով քանդակելու հետ: Վյու կարծիքն ավելի հավանական ե թվում, յերե, ինչպիս արդեն նկատել ե Հ. Տաշյանը, նկատի յենք ունենում, վոր ժանգից պատրաստված թանաքով է իյին գրում նաև գրի մյուս տեսակները, վորոնք յերեք յերկաթագրիր չեն կոչվել:



Լուսանկար № 5. Տեկորի 964 թվի խաչարձանը.

+ Բ:Ն: Շ:Գ:
 ԵՍՊԵՄ
 Ա Պ ԺԱՐ
 Ա Վ Ո Ր
 Հ Ա Գ Հ Ե Յ
 Ի Ւ Ա Ե Մ
 Շ Ա Ռ Ա

Տեկորի
 արձանագրության
 վերծանությունը.

Ե. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐԻ ԶԱՐԳԱՑՄՈՆ ԸՆԹԱՑՔԸ

Նախորդ գլխում յեկանք այն յեղբակացության, վոր գրերի
 գոյության սկզբնական շրջանում յերեք տարբեր նպատակների
 համար հայերը գործ են ածել գրչության յերեք տարբեր վոճար:
 Այժմ տեսնենք, թե նրանցից յուրաքանչյուրն իր գոյության
 ընթացքում ինչպիսի փոփոխություններ ե կրել:

Այդ փոփոխությունները մենք ստորաբաժանում ենք յերկու
 տեսակի: Նախ նշում ենք այն փոփոխությունները, վորոնք ընդ-
 հանուր են ավյալ վոճի բալոր գրերի համար և հետո քննում
 յուրաքանչյուր գրի անհատապես կրած փոփոխությունները:

Ա. Բոլորաձեկ յերկարագիր.—Գրի այս տեսակը գործ ե
 ածել վիմագիր արձանագրությունների մեջ հենց սկզբից սկսած
 և շարունակում ե նույն դերը կատարել նաև մեր որերում: Քարե-
 րի վրա շատ քիչ կգտնվեն այլ վոճով զրված արձանագրություն-
 ներ, յեթե չհաշվենք հատուկնությունները և ուշ ժամանակ-
 ներ,

ներին պատկանող՝ Զուղայի գպլոցը, վորտեղ վիմագիր արձանա-
գրությունների պաշտոնական վոճ դարձավ բոլորգիրը:

Բոլորածն յերկաթագիրը յեղել և նաև պաշտամունքային
ձեռագրերի բնագրային վոճը՝ սկսած զրչության սկզբից մինչև
XIII դարի առաջին տասնամյակները: Մեզ հայոնի բոլոր ավե-
տարանները մինչև 1205 թվականն առանց բացառության գրված
են բոլորածն յերկաթագրով: Ամենաուշ բոլորածն յերկաթագիրը
ավետարանը պատկանում է 1229 թվականին, վորից հետո բոլորածն
յերկաթագիրը ձեռագրերի մեջ գործ և ածվել միայն վերնագրերի,
մատյանների առաջին տողերի, յերբեմն ել գրքերի առաջին յերես-
ների վրա՝ իրեն զարդագիր և կամ վերնագիր:

Ի դեպ՝ բոլոր տեսակի զարդագրերը կազմված են բոլորածն
յերկաթագրի հիման վրա: Մեր մանրանկարչության մեջ դրանք
առաջ են գալիս սկսած IX դարից: Առաջին զարդագիրը սովորական
բոլորածն յերկաթագիրն ե, միայն քիչ ավելի խոշոր գրչությամբ,
վորից հետո առաջ ե գալիս կարմիր գեղով գծված, դարձյալ սո-
վորական բոլորածն յերկաթագիրը, իսկ ավելի ուշ՝ X դարի վեր-
ջերից սկսած, հանդես են գալիս զարդագրերի ավելի բարդ տե-
սակները՝ բազմապիսի ձևերով և խայտարդետ յերանգավորում-
ներով, վորոնց մեջ սովորական գրերը փոխարինվում են թռչուն-
ների, ձկների ու այլ կենդանիների և կամ այլ հյուսվածքների
պատկերներով, վորոնք մանրաբվեստի պատմության համար ունեն
կարևոր նշանակություն:

Տպագիր գրականության մեջ բոլորածն յերկաթագիրը մտավ
իրեն լոկ գլխագիր և այժմ ել շարունակում ե մնալ իրեն այդ-
պիսին:

Սակայն, բոլորածն յերկաթագիրն իր գոյության մեկ ու
կես հազարամյակի ընթացքում շարունակ ձևավոխվել ե, և յերբ
նույն վոճին պատկանող այսորվա գիրը համեմատության ենք
դնում հնագույնի հետ, մեծ տարբերություններ են նկատվում
նրանց միջև:

Այդ տաքբերությունները հետեւյալներն են.

ա) Հնագույն գրչության որինակների մեջ գրերը շատ լայն
են, նրանց բարձրության և լայնության տրամադեմքը մոտա-
վորապես հավասար են միմյանց (բացի F, Q, Ը, Ծ, Ծ, Ր, Վ գրե-
րից): Հետագայում, X դարում, գրերը բավականաչափ սեղմված

են և նրանք, այդ սեղմվելու հետեանքով, նեղ ու յերկար տեսք են ստանում: Այդ յերեսույթն առավել ևս մեծ չափով ե նկատվում XIII դարում, յերբ, բացի գրերն իրար կողքի սեղմելուց, սկսում են նաև իրար մեջ գրվել: Որինակ՝ XIII դարի արձանագրությունների մեջ հաճախ պատճում ե Յ գրի փորի մեջ գրված մի այլ փոքր գիր: Այս յերեսույթն ընդհանրանում և XVI—XVII դարերի արձանագրություններում: XIII դարում և առաջ գալիս նաև նախորդող գրի վերնական վերջավորության տակ կամ ստորնական վերջավորության վրա մի այլ փոքրադիր տառ գրելու յերեսույթը, վոր մեծ զարգացում ստացավ հետագայում: Այս բոլոր սեղմութիւնները փակազրելու և համառոտելու հետ միասին, ուշ ժամանակների պատկանող արձանագրությունները հնագույնների համեմատությամբ ավելի դժվար ընթեռնելի յեն դարձնում:

բ) Հնագույն բոլորաձև յերկաթագիրը հաստ ու բարակ գծեր չունի, բացի Ա. գրի միջից անցնող գծից, վոր աջակողմյան տառասյան գլխից իջնում և փորի միջով և միանում յերլուստին: Հնագույն վիմագրերի մեջ գրերի բոլոր գծերը միևնույն թանձրությունն ունեն: Հետագայում, XIII դարում, պատճում են արձանագրություններ, փորոնց գրերի սկզբնավորող կամ վերջավորության ամելի թանձր են, իսկ ավելի ուշ, XIV դարից հետո, առաջ և գալիս կամարավորվող մասերը բարակացնելու և տառապյունները հաստացնելու սովորությունը: Այս յերեսույթը յերեսմն հասնում և այսպիսի չափազանցությունների, վոր քիչ մաշված գրերին նայելիս՝ մարդ դժվարանում և փորոշել, թե տառասյունը վնր գրին և պատկանում, քանի վոր տառասյունները միացնող կամարավոր գծերն անհետացած են լինում:

գ) Բոլորաձև յերկաթագրի հնագույն որինակների մեջ աջակողմյան յերլուստավոր գծերն ուղիղ են, միանգամայն հորիզոնական և համեմատաբար յերկար: Այդ գծերը X դարում սկսում են կարճանաւը իսկ XV դարում կեռանաւը թեքվելով դեպի ներքեւ Ուրիշ խոսքով, այդ յերլուստները վեր են ածվում մի տեսակ կարճ տառասյունների, փորոնք կամարի միջոցով միացած են լինում:

դ) Մի քանի գրերի վերնական գծերը հնագույն որինակներում համարյա թե ամբողջական են, դրանք են՝ Վ., Թ., Կ գրերը: Այս ընդհանուր յերեսույթները նշելուց հետո քննենք յուրա-

քանչյուր գրի անհատապես կրած փոփոխությունները: Այստեղ, իհարկե, մենք ի վիճակի չենք բոլոր խոտորությունները և արտառոց գծագրություն ունեցող ձևերը ներկայացնել իրեր գրերի ձևափոխության յերկույթներ: Մեր նպատակն այդ չե: Մենք և վոչ մի բացառիկ գեպքի վրա կանգ չենք առնի, այլ միայն կնշենք տվյալ գրի կրած այն փոփոխությունները, վորոնք բնորոշ են նրա զարգացման ընթացքի համար, իսկ թե պայմանագրության մեջ ն գրի բացվածքը հակառակ կողմից և փորագրած՝ գա մեր գործը չե և տվյալ գեպքում չի հետաքրքրում մեզ, վորովհետև այդ յերկույթն ընդհանուր չե և վոչ մի աղղեցություն չունի գրի զարգացման ընթացքի վրա (տես տախտակ և 5):

1. Ա. գրի հնագույն նմուշների մեջ աջակողմյան ստեղնից մի բարակ գիծ իջնում ե կամարի վրա և նույն տառասյան ստորին մասից դուրս գալով՝ առաջացնում և նրա յելուստը: X—XIII դարերում այդ բարակ գիծն սկիզբ ե առնում վոչ թե աջակողմյան տառասյան գլխից, այլ նրա մեջտեղից և XIII դարում ել՝ ստորին մասից, վորից հետո նա չքանում ե: Զեռազրերի մեջ այս յերկույթը չի նկատվում, աջակողմյան յելուստն սկզբում միայն ուղիղ գիծ ե, վոր մոտավորապես հորիզոնական դիրք ունի, XIII դարում նա վոչ թե հորիզոնական ե, այլ ուղղված և գեպի ավելի ներքե, իսկ ավելի ուշ՝ XV—XVII դարերում կորանում ե և կամարով միանում աջակողմյան տառասյան ստորին մասին:

2. Բ, Գ, Դ գրերի գլուխները հենց սկզբից ել փոքր են: Աջակողմյան յելուստները համեմատաբար յերկար են և ուղիղ, XIII դարից հետո այդ յելուստները կորանում են:

3. Ե—գլուխը փոքր ե, իսկ յելուստը յերկար և ուղիղ: X—XIII դարերում կարճանուժ ե, զորից հետո՝ կորանում: XIII—XV դարերում այդ յելուստի ներքե թեքված մասն ուղղահայց դիրք և ստանում և հավասարվում և աջակողմյան կիսաստեղնին:

4. Զ—այս գիրն սկզբում մեծ շրջանաձև կլոր և և տակին ունի մի յերկար ուղիղ գիծ: Հետագայում կլորակը փոքրանում ե և նեղանում: XVII դարում կլորակն ավելի յի փոքրանում և տակի գիծը բեկրեկում՝ սկիզբ գեպի վեր և պոչը գեպի ներքե և ուղղվում:

5. Է—սկզբում մի ուղղահայց ձող ե, վորի աջ կողմից դուրս են դալիս յերկու ուղիղ գծեր—մեկը՝ ստորին մասից, իսկ

մյուսը՝ մեջտեղից: X—XI դարերում միջն մասի գիծը կարճանում եւ ավելի շատ, քան ստորինը: XIII դարից սկսած յելուստների ծայրերն սկսում են թեքվել դեպի ներքեւ, իսկ XVII դարում նրանք ուղղահայաց դիրքով միանում են հիմնական ստեղնին:

6. Ը—սկզբում զլուխը համեմատաբար փոքր ե, բայց ստորին գիծն ուղիղ և յերկար, վորը X—XI դարերում կարճանալով՝ հավասարվում ե գլխի լայնության, իսկ XIII դարից հետո՝ թեքվում ե դեպի ներքեւ:

7. Թ—հնագույնի աջակողմյան ստեղնն Ո գրի նման ամբողջական ե, և յելուստը՝ ուղիղ: X դարում քիչ նեղանում ե, և յելուստը՝ կարճանում, իսկ XIII—XV դարերում աջակողմյան ստեղնը կարճանում, վեր ի ածվում վերնական ստեղնի և յելուստի զլուխը ներքեւ ե կախվում:

8. Ժ—հենց սկզբում ել զլուխը մեծ չե, բայց աջակողմյան յելուստն ուղիղ ե և յերկար: XI դարում այդ յելուստը կարճանում ե, իսկ XIII դարից հետո՝ թեքվում ե դեպի ներքեւ: X—XIII դարերում առաջանում ե մի տեսակ ձախակողմյան գլուխ ունեցող ժ դիրք, վոր չքանում ե XV դարում:

9. Ի, Լ, Խ—ժամանակի ընթացքում, բացի ընդհանուր վորփոխություններից, այլ զգակի փոփախություններ չեն կրում:

10. Ծ—հնագույն որինակներում աջակողմյան յելուստը դեպի վերև և թեքված, իսկ փորը մեծ ե և շրջանաձև: Հետագայում հիշյալ յելուստը կախվում ե ներքեւ և փորը յերկու կողքերից սեղմվելով՝ նեղանում ե:

11. Կ—սկզբնական շրջանում ձախ ստեղնը գրեթե ամբողջականի չափ յերկար է, իսկ աջ կողմինը՝ շատ կարճ: XIII դարում նրանք ստանում են այսորվա պատկերը, այսինքն՝ ձախակողմյանը դառնում ե սովորական վերնական ստեղն, իսկ աջակողմյանը՝ ստորնական:

12. Հ—սկզբում այս դիրք աջահայաց անկյան ձև ունի և կազմված ե միայն 2 գծերից: XIII դարում ստորին կողմը մի մասով բեկվում ե ներքեւ, իսկ վերինի մի մասն ստանում ե ուղղահայաց դիրք:


13. Զ—սկզբում ձախակողմյան բացվածքը մեծ ե, փորը շըրշանաձև է, իսկ ստորին կողմում ունի մի ուղիղ գիծ և շատ նման ե

այժմյան Զ գրին, բայց ավելի մեծ փորով: XIII դարում նման-վում ե արաբական Հ թվանշանին:


14. Դ—անհատական վորեև փոփոխության չի յենթարկվում:

15. Ճ—հագույն որինակներում աջակողմյան յելուստն ուղղահայաց մաս չունի: XI—XIII դարերում աջակողմյան յելուստը ձեռք ե բերում ուղղահայաց մաս: Այդ միջոցներին ել նրա անկյու-նավոր փորն սկսում ե սեղմվել:

16. Մ, Յ, Ն—անհատական փոփոխությունների համարյա-թե չեն յենթարկվում:



Լուսանկար № 6. Սարիդամիք 992 թ. արձանագրությունը.



Սարիդամիք 992 թվի արձանագրության վերծանությունը.

17. Շ—այս գիրը գրչության հնագույն մնացորդների մեջ
աջ կողմից բաց մի շրջան ե, վորն իր զլիսին ունի մի թեքադիք
ուղիղ գիծ, ժամանակի ընթացքում շրջանը փոքրանում ե և ստո-
րին ծայրի մոտ գծի վերջավորությունը թեքվում է զեպի ներ-
քե, իսկ զլիսի թեքադիքը գիծը XI—XIII դարերում ուղղահայաց
դիրք ե ստանում և վերջում ել XV—XVII դարերում, յերկու
տեղով բեկվում ե, ձախ կողմի ծայրը զեպի վեր և աջ կողմինը՝
զեպի ներքեւ:

18. Զ—համարյա թե անհատական փոփոխությունների չեցնթթվագել՝ յիթե չհաշվենք ստորին թեքադիր գեծը, վոր XIII—XV գարերում յերկու տեղից բեկվում ե, աջ ծայրը դեպի ներքեւ և ձախ ծայրը՝ դեպի վերև:

19. Պ—բազմաձև գըերից մեկն և Միւնույն ժամանակին պատկանող գրչության մնացորդների մեջ կա տարբեր վոճերք պատկանող Պ գիր, մինչև X դարը սովորական ձևն եւ առաջին ստեղնը շատ կարճ, վոր ամբողջականի մեկ յերրորդ մասն ե կաղմում, յերկրորդը՝ քիչ ավելի յերկար և վերջինը՝ ամբողջական. այդ յերեք ստեղները միմյանց հետ միացած են լինում մի կամարով: XIII դարում կան գործածված յերկամար Պ գրեր, վորոնց ստեղներն ստորին կողմից փակված են լինում կամարավոր կամ ուղղաղիծ փակերով: XVII դարում գործածությունից արդեն վերցած և յերկամար ձևը Զեռաղըրում յերկամարը չկա:

20. Զ—հնագույն մնացորդների մեջ այս գրի մարմինն այնքան ել թեքաղիր չեւ և մեծ ե, XIII դարում գործածված են չափաղանց թեք ձևեր: Այդ գրերն իրենց թեքությամբ ամբողջ գրության մեջ աչքի յեն ընկնում և չեն համապատասխանում մնացած գրերի վոճին: Սակայն, յերբեմն այդ գիրն իր թեքությամբ գեղեցկություն և բաղմազանություն և մոցնում գրության մեջ: Սարաղիր գիծն սկզբում քիչ թեքված և դեպի ներքեւ, իսկ հետագայում նրա աջ ծայրը դեպի վերև և թեքվում: XVI դարում այս գրի մարմինը համարյա ուղղահայաց դիրք և ստանում:

21. Ռ—սկզբում ուղիղ յելուստ ունի իր աջ կողմի ստեղնի վրայից: XIII դարում նա սկսում է կեռանալ և իր ծայրով թեքվել դեպի ներքեւ: XVII դարում այդ յելուստը վեր և ածվում ստորնական կիսաստեղնի:

22. Ս—ժամանակի ընթացքում միայն կողքերից սեղմվում ե:

23. Վ—նախնական որինակների մեջ առաջին ստեղնը համարյա թե ամբողջական և շփոթելի յե Ա. գրի հետ, յեթե Ա.-ն միջին բարակ գիծը չունենար: Սարին յելուստն ուղիղ և միանգամայն հորիզոնական: Ժամանակի ընթացքում առաջին ստեղնը կարճանում և նախ մոտենում և վերնականի, իսկ XIII դարում վերջնականապես ձևավորվում ե իրեւ միջնական: XIII—XV դարերում ստորին յելուստը թեքվում և դեպի ներքեւ:

24. Տ—նախնականն այժմյանի տեսքը չունի: Զախ կողմից ունի ստորնական մի ստեղն, կենտրոնում՝ մի ուղղահայաց ամբողջական ստեղն և աջ կողմից՝ վերնական: Յերբեմն ստեղները լինում են ամբողջական՝ այժմյան ձեռագիր գլխատառ Մ-ի նման:

ХIII դարում միջին ամբողջական ստեղնն իր վերին մասով թեք-
վում ե գեղի ձախ և գիրն ստանում ե բացբերան արաբական 8
թվանշանի տեսք:

25. Բ—անհատական փոփոխությունների չի յենթարկվում:

26. Յ—սկզբում ստորին բաց շրջանը վերինի համեմատու-
թյամբ ավելի մեծ է: XIII դարում կան այնպիսի նեղ Յ գրեր,
վարոնց շրջաններն իրաք չեն կազչում, ուստի ստիպված են յեղել
այդ շրջաններն իրար միացնել մի ուղղահայաց գծով:

27. Ի—մինչև XIII դարը աջակողմյան յեղուստն ուղիղ
գիծ ե, վորը ձգված ե հորիզոնական ուղղությամբ: Դրանից հետո
այդ գիծը կեռանում ե գեղի ներքեւ:

28. Փ—յերևելի փոփոխություններ չի կրում:

29. Ֆ—ստորին մասում տառասյան հատող գիծն սկզբում ուղիղ
է և մեծ մասամբ դանդում ե ստեղնի բոլորովին ստորին մասում:
Այս գիծը կամաց-կամաց բարձրանում ե դեպի վեր և XIII դարից
հետո յերկու տեղից բեկվում ե՝ ձախ ծայրը դեպի վեր և աջ
ծայրը՝ գեղի ներքեւ:

Բոլորաձև յերկաթագրի ձևափոխությունը քնննելիս՝ մենք գլխա-
վորապես ուշադրություն դարձրինք վիմական արձանագրություն-
ների վրա, վորովինետև ձեռագրերի մեջ գրի այս տեսակի գործա-
ծությունը տեսել ե կարճ և այն ել ձեռագրերի միայն մի մասի մեջ
և գործածվել իսկ արձանագրությունների համար նա յեղել ե պաշ-
տոնական վոճ և գործածվել ե սկզբից սկսած մինչև մեր որերը:

Ինչպես պարզ նկատվում ե մեր քննությունից և կազմած
տախտակից, գրերի ձևափոխությունը սերտորեն կապված են տեղ և
ժամանակ ինայելու հետ: Այդ պեղի հասկանալի կդառնա, յեթե
նկատի առնենք, վոր մի նեղ կամարի կամ մի փոքր ճակատակալ
քարի վրա, կամ մի այլ տեղում պետք ե լինում տեղափորել մի
ամբողջ արձանագրություն:

Սկզբնական շրջանում այդպիս չի յեղել: Հնից ունենք մեծ
մասամբ միայն յեկեղեցու շուրջը պար կազմող միատող արձանա-
գրություններ, վորոնք վերաբերում են տվյալ հուշարձանի շինու-
թյան հանգամանքներին: X—XIII դարերում արձանագրություն-
ների բովանդակությունը միանգամայն փոխվում է: Այստեղ
շինության և նորոգության վերաբերող վիմագրերը չնշին տոկոս
են կազմում, գերակշռողը նվիրատվական արձանագրություններն

հն և սրանք այնքան շատ են, վոր յերբեմն հուշարձանի պատերի վրա պատ տեղ մնացած չի լինում:

Մեծ ուխտատեղիները յերբեմն ունեն հարյուրից ավելի արձանագրություն (Հաղարծին, Սանահին, Գեղարդ և այլն), իսկ մի քանի տասնյակ արձանագրություններ ունեցող հուշարձանները բազմաթիվ են: Յեզ, յեթե հնագույնների մեջ հանդես են գալիս պատմական գրականությունից մեզ հայտնի անձնավորությունների անուններ և պատմական դեպքեր՝ մարզպաններ, նախարարներ, թագավորներ, կաթողիկոսներ և նրանց անվան հետ կապված դեպքեր, ապա X—XIII դարերի արձանագրությունները, բացի գրանից, նաև հարուստ նյութ են տալիս մեր յերկրի տնտեսական պատմությանը (կալվածքների առ ու ծախք, հարդերի վերաբերյալ տեղեկություններ և այլ բազմաթիվ տնտեսական յերևույթներ): Այս փաստերը մեծ նշանակություն ունեն պատմության հարցեր պարզաբանելու համար:

Բ. Ուղղագիծ յերկարագիր.—զրի այս տեսակը գործ է ածվել սովորական ձեռագիր մատյանների համար սկզբից մինչև իր գոյության վախճանը և վերջնականապես գործածությունից հանվել և XIII դարում, իսկ մինչ այդ, VII—XI դարերում, նրանից առաջացել են բոլորգիրը և շղագիրը. այս յերկուսը միաժամանակ են բաժանվել ուղղագիծ յերկաթագրից և այսուհետև X—XI դարերում ձեռագրվել են իրեն զրի ինքնուրույն տեսակներ:

Բարեխախտաբար ունենք անցման շրջանի տեսակների շատ որինակներ, վորոնց շնորհիվ այժմ կարող ենք փոփոխության ձեռին հետևել: Այս տեսակի հնագույն որինակներ կարող են համարվել Դվինի կաթուղիկեյի ծածկի կղմինդրի վրայի արձանագրությունները, վորոնք պատկանում են VII դարին, Զգարթնոցի արձանագրությունները, վորոնք պատկանում են VII—X դարերին, Աղաթանգեղոսի կրկնագիր ձեռագրի մասերը և մի շարք այլ ձեռագրեր:

Վերոհիշյալ գըչության մնացորդների բոլորի մեջ ել արդեն ակսել են սկիզբն առնել բոլորգիր և շղագիր գոյացումները: Մենք հնագույն ուղղագիծ յերկաթագիրն ընդունուել ենք իրեն բոլորովին բարձրության տարբեր աստիճաններ չունեցող գրչության տեսակ, սակայն վերև թված ձեռագրերի և արձանագրությունների մեջ մի քանի գրեր սկսել են կուրս ցցվել գրերի բարձրության սահմանափակիչ գծերից, գլխավորապես Փ և Փ գրերը:

Այդ յերկույթը համարում ենք բոլորգրի և շղագրի սկզբնապ-
ղորության արշալույսը։ Ուղղագիծ յերկաթագրի ձևափոխում-
ները կատարվել են հետեւյալ յեղանակով։ Նախ գրի յելուստավոր
մասերն սկսում են գրերի վերերի և ներքերի յեղափակիչ գծերից
գուրս գալ, այս առավելապես նկատելի յև հորիզոնական մասերի
վրա, վորոնք գրերի շարքում առանձնապես տեղ են բռնում։ Պարզ
է, վոր այդ յերկույթը տեղի յեւ ունենում տեղ խնայելու նպա-
տակով։ Մատորին մասում գուրս են ցցվում թ, զ, դ, զ, թ, լ, դ,
յ, շ, պ, ջ, ր, ց, ֆ գրերի ծայրերը, վերևի մասում՝ ե, ծ, ծ,
ն, ն, մ, ն և յերկու մասերում՝ թե վերերից և թե ներքերից՝ է, թ,
ի, խ, կ, ջ, պ, փ գրերի ծայրերը։

Դրերի այս փոփոխություններն սկզբում նշանապատճերի
մեջ վորեւ փոփոխություն չեն մտցրել, բայց շուտով այդ ձևա-
փոխություններն այն աստիճանի յեն հասել, վոր այլևս ուղղագիծ
յերկաթաղբերից միանգամայն տարբերվում են իրենց բարձրու-
թյան աստիճաններով, և XII դարում ձևափորվել են իրեւ գրչու-
թյան առանձին տեսակներ։ Նոր գոյացությունների սկզբին բոլոր-
գիրը և շղագիրն իրարից կտրականապես անջատված չեյին։
Նրանք վերջնականապես պարզորշվեցին XIII դարում։ Զափա-
զանց հետաքրքիր և այդ ձևափոխությունների ընթացքը, վոր տալիս
ենք առանձին համադրական տախտակով (տես տախտակ Հ 6)։

Ուղղագիծ յերկաթագրի ձևափոխությունների մեջ նկատվում են
գրերի համար ընդհանուր յերկույթներ. դրանք կարելի յեւ ամ-
փոփել այսպիս։

Հ. Ինչպես ասացինք, հնագույն ուղղագիծ յերկաթագիրը
կատարելապես ժապավինատիպ եւ և գրի վոչ մի մասնիկ յեղա-
փակիչ վերին և ստորին գծերից գուրս չի ցցված։ Այս կրկնագիրը
պատճիկները և չնչին բացառությամբ X դարից մեղ հասած ձե-
պագրերը (Ծուղրութիւն գրչագրի հիշատակարանը՝ գ. 974 թ., Եղմի-
ածնի հին ժողովածուի Հ 2684 ձեռագիրը՝ «Մեկնութիւն Երգոց
Երգոյն Գրիգորի Նիւսացւոյ (979 թվականի), Փղոսկրե ավետարա-
նի Յեղվարիկ և Կարպիանոսի թղթերը և այլն, վորոնց մեջ գուրս են
ցցված միայն փ, բ գրերը և յերբեմն ել ն, լ։ Ավելի ուշ, XI—XII
դարերում, ուղղագիծ յերկաթագրի մնացած գրերն ել են սկսում
դուրս ցցվել յեղափակիչ գծերի սահմաններից։
Այդ յերկույթն ազդում ե գրերի մարմնի մեծության վրա և

Լուսանկար № 7. Մխիթար Այրիվանեցու ինքնազիր.

զրեցի կենտրոնական մասերն սկսում են փոքրանալ, քանի վոր յեթե նույն մեծությամբ կենտրոնական մաս ունենային, այդ դեպքում շատ կմեծանային:

Հնագույն գրերի յեղափակիչ գծերն այս յեղանակով վեր ածվեցին միջնականների սահմանագծի, իսկ վերևից և ներքեւից, նրանց զուգահեռ, առաջացան նոր գծեր՝ վերնական ու ստորնա-

կան մասերը սահմանագծելու համար, և ուղղագիծ յերկաթագիրն աննկատելիորեն դարձավ ըոլորգիր և շղագիր:

